

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՑԵՐՐՈՐԴ ԿՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

(1938—1942 թ. թ.)

Թ Ե Զ Ի Ս Ն Ե Ր



Ա. Ա. ԺԴԱՆՈՎ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՄԿ(Բ)Կ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Թ Ե Զ Ի Ս Ն Ե Ր



Գ Ե Տ Ը Ր Ա Տ

ԲԱՂԱԲՍՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԻՎԱՆ • 1939

05 FEB 2010

ՊԵՏԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ


ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՅԵՐՐՈՐԴ ԷՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ
(1938—1942 թ. թ.)

Թ Ե Զ Ի Ս Ն Ե Ր



Ա. Ա. ԺԴԱՆՈՎ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՄԿ(Բ)Կ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ
Թ Ե Զ Ի Ս Ն Ե Ր



Պ Ե Տ Զ Ր Ա Ց

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939

ԽԱՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՐՐՈՐԴ ԶՆԳԱՍՅԱ ՊԼԱՆԸ

1938—1942 թ. թ.

Համկ(բ)Կ XVIII Համագումարում
ընկ. Վ. Մ. Մոլոտովի գեկուցման բեգիսները,
վարոնք հիմնականում հավանություն են գտել
Համկ(բ)Կ Կենտկոմի ֆաղբյուրոյի կողմից



11-28227 գր

М. МОЛОТОВ

ТРЕТИЙ ПЯТИЛЕТНИЙ ПЛАН РАЗВИТИЯ
НАРОДНОГО ХОЗЯЙСТВА СССР
1938 — 1942 Г.Г.
ТЕЗИСЫ

А. А. ЖДАНОВ

ИЗМЕНЕНИЯ В УСТАВЕ ВКП(б)
ТЕЗИСЫ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

1. ՅԵՐԿՐՈՐԴ ԸՆԳԱՄՅԱԿԻ ԷԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ԸՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ԷԻՄՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ

1. Յերկրորդ հնգամյա պլանի (1933—1937 թ. թ.) հաջող կատարման հետևանքով ԽՍՀՄ-ում լուծված և յերկրորդ հնգամյակի հիմնական պատմական խնդիրը—վերջնականապես լիկվիդացիայի յեն յենթարկված բոլոր շահագործող զասակարգերը, լիովին վոչնչացված են այն պատճառները, վորոնք առաջացնում են մարդու շահագործում՝ մարդու կողմից և հասարակության բաժանում շահագործողների և շահագործվողների: Լուծված է սոցիալիստական հեղափոխության ամենադժարին խնդիրը՝ ավարտված է գյուղատնտեսության կոլեկտիվացումը, վերջնականապես ամրապնդվել է կոլտնտեսային կարգը: Մեր յերկրում «հիմնականում իրականացված է կոմունիզմի առաջին ֆազը—սոցիալիզմը» (Ստալին): Սոցիալիզմի հաղթանակն որենազրականորեն ամրապնդված է ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության մեջ:

Արտադրական Փոնդերի, արտադրության գործիքների և արտադրական կառուցումների սոցիալիստական—պետական և կոոպերատիվ—կոլտնտեսային սեփականությունը յերկրորդ հնգամյակի վերջին կազմում էր մեր յերկրում յեղած բոլոր արտադրական Փոնդերի 98,7 տոկոսը: Արտադրության սոցիալիստական սիստեմը զարձեւել է անբաժանելիորեն տիրապետողը ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ. արդյունաբերության համախառն արտադրանքի գծով նա կազմում էր 99,8 տոկոս, գյուղատնտեսության համախառն արտադրանքի գծով, ներառյալ կոլտնտեսականների տնձնական ոժանդակ տնտեսությունը,—98,6 տոկոս, ասյրանքաշրջանառության գծով—100 տոկոս:

Յերկրի եկոնոմիկայի կատարված սոցիալիստական վերակառուցմանը համապատասխան, փոխվել է նաև խորհրդային հասարակության զասակարգային ստրուկտուրան: ԽՍՀՄ-ի սո-

ցիալիստական տնտեսութեան մեջ զբաղված բանվորները և ծառայողները յերկրի ամբողջ բնակչութեան կազմի մեջ 1937 թվին կազմում էին 34,7 տոկոս. կոլտնտեսային գյուղացիութունը, կոոպերացված տնայնագործների հետ միասին—55,5 տոկոս. բանակը, սովորողները, թոշակառուները և ուրիշները—4,2 տոկոս: Այսպիսով, արդեն այն ժամանակ յերկրի բնակչութեան 94,4 տոկոսը զբաղված էր սոցիալիստական տնտեսութեան մեջ կամ սերտորեն կապված էր նրա հետ: Բնակչութեան մնացած մասը՝ մենատնտես-գյուղացիները, չկոոպերացված տնայնագործներն ու արհեստավորները կազմում էին բնակչութեան միայն 5,6 տոկոսը: Այն ժամանակվանից բնակչութեան այդ մասն էլ ավելի յե պակասել:

Սոցիալիստական հասարակութունը ԽՍՀՄ-ում այժմ կազմված է միմյանց նկատմամբ բարեկամական յերկու դասակարգերից—բանվորներից և գյուղացիներից, վորոնց միջև, ինչպես նաև այդ դասակարգերի ու ինտելիգենցիայի միջև, սահմանազծերը ջնջվում են, աստիճանաբար անհետանում: ԽՍՀՄ-ի աշխատավորները ճնշող մասսայով հանդիսանում են անդասակարգ սոցիալիստական հասարակութեան, կոմունիզմի ակտիվ ու գիտակից կառուցողներ: ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթանակը ապահովեց ժողովրդի ներքին բարոյական ու քաղաքական առաջներում վոչ մի տեղ չտեսնված՝ միասնութունը, աշխատավորների բարոյական-քաղաքական միասնութունը կոմունիստական կուսակցութեան և խորհրդային իշխանութեան դրոշի տակ ու ղեկավարութեամբ, միասնութուն, վորն ընդունակ է վոչ միայն վերջ դնելու թշնամական դասակարգերի մնացորդներին, նրանց խորթ ազդեցութուններին և հակահարված տալու արտաքին ամեն տեսակ թշնամական վրտնձգութուններին, այլև հանդիսանում է մեր հայրենիքի հետագա աճման ու ծաղկման լավագույն յերաշխիքը, մեր յերկրում կոմունիզմի հաղթանակի յերաշխիքը:

2. Յերկրորդ հնգամյակի գլխավոր ու վճռողական տնտեսական խնդիրը—ԽՍՀՄ ժողովրդական տնտեսութեան տեխնիկական վերակառուցման ավարտումը—հիմնականում կատարված է:

Արժատապես նորոգվել է յերկրի արտադրական-տեխնիկական ապարատը: Արդյունաբերութեան ամբողջ արտադրանքի ավելի քան 80 տոկոսը 1937 թվին ստացվել է նոր ձեռնարկութուններից, վորոնք կառուցվել կամ ամբողջապես վերակառուց-

վել են առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում. գյուղատնտեսութեան մեջ դործող բոլոր տրոխտորների ու կոմբայնների մատավորապես 90 տոկոսը խորհրդային արդյունաբերութեանն է արտադրել յերկրորդ հնգամյակում: Արդյունաբերութեան և տրանսպորտի բնագավառում յերկրորդ հնգամյակի առաջադրանքները կատարված են ժամկետից շուտ: Արդյունաբերութեանը յերկրորդ հնգամյակը կատարել է սու 1-ն ապրիլի 1937 թվի, այսինքն՝ 4 տարի ու 3 ամսում, ըստվորում, յերկրորդ հնգամյակում ևս հատկապես արագորեն աճում էր ծանր արդյունաբերութեանը: Յերկաթուղային տրանսպորտի վոխադրումների գծով յերկրորդ հնգամյակը գերազանցումով կատարված է 4 տարում: Գյուղատնտեսութեան արտադրանքի գծով՝ հացահատիկի գծով, բամբակի գծով նույնպես գերակատարված են յերկրորդ հնգամյակի կարևորագույն առաջադրանքները:

1932 թվականի—առաջին հնգամյակի վերջին տարվա—համեմատութեամբ արդյունաբերութեան արտադրանքը 1937 թվականին աճել է 120 տոկոսով, մինչդեռ ըստ յերկրորդ հնգամյա պլանի առաջադրանքի աճ նախատեսվում էր 114 տոկոսով: Արդյունաբերութեան արտադրանքի աճի տարեկան միջին տեմպերը յերկրորդ հնգամյակում կազմում էին 17,1 տոկոս՝ պլանով նախատեսված 16,5 տոկոսի դիմաց:

ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում աճել են արտադրական կադրեր, վորոնք հաջողութեամբ են տիրապետում նոր տեխնիկային: Յերկրորդ հնգամյակի խոշորագույն հաղթանակն է հանդիսանում խորհրդային ինտելիգենցիայի, սոցիալիստական շինարարութեան բոլոր ճյուղերի համար հարկավոր, բավականաչափ կադրերի ստեղծումը և նոր ղեկավար աշխատողների լայն առաջադրումը՝ կուսակցական և վոչ-կուսակցական բոլշևիկներից, ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում:

Նոր տեխնիկայի յուրացման բնագավառում ձեռք բերված հաջողութեանը վառ արտահայտութուն դտան ստախանովյան շարժման մեջ: Սոցիալիստական մրցութեան և նրա բարձրագույն ձևի— ստախանովյան շարժման—ծավալումը հասցրեց աշխատանքի արտադրողականութեան հուժկու վերելքի՝ արդյունաբերութեան մեջ և ժողովրդական տնտեսութեան մյուս ճյուղերում: Աշխատանքի արտադրողականութունը խոշոր արդյունաբերութեան մեջ յերկրորդ հնգամյակի ընթացքում ավելացել է 82

տողոսով՝ պլանով նախատեսված 63 տողոսի դիմաց, իսկ շինարարութան բնագավառում աշխատանքի արտադրողականութունըն այդ ժամանակաշրջանում ավելացել է 83 տողոսով՝ յերկրորդ հնգամյակի պլանով նախատեսված 75 տողոսի դիմաց: Ստախանովյան շարժման վերելքը և ստախանովականների սոցիալիստականորեն դիտակից աշխատանքի բազմաթիվ հիանալի որինակները՝ աշխատանքի արտադրողականութան նրանց բարձր ցուցանիշների հետ՝ նախադրյալներ են ստեղծել աշխատանքային կարգապահութունն արմատապես ամրապնդելու համար մեր բոլոր ձեռնարկութուններում ու հիմնարկներում, վորը բոլոր աշխատավորների աշխատանքի բարձր արտադրողականութան անհրաժեշտ պայմանն է և ԽՍՀՄ-ում կոմունիզմի նոր, հուժկու աճման գրավականը:

Յերկրորդ հնգամյա պլանի կատարումն սպառնալից է համար անհրաժեշտ էր պայքար կազմակերպել թշնամի դասակարգային տարրերի մնացորդների դեմ, թշնամի դասակարգային ազդեցութուններին դեմ՝ ժողովրդական տնտեսութան մեջ, կուլտուրական շինարարութան մեջ, ամբողջ քաղաքական կյանքում: Դրա համար անհրաժեշտ էր, ամենից առաջ, պայքար կազմակերպել հանուն սոցիալիստական, պետական և կոլտնտեսային սեփականութան պահպանման ու ամրապնդման՝ ընդդեմ դողերի և պետական ու կոլտնտեսային բարիքը հափշտակողների, ընդդեմ դասակարգային թշնամու բոլոր ու ամեն տեսակ աջակիցների և, մանավանդ, ընդդեմ ժողովրդի դավաճանների՝ հանձինս տրոցկիստական-բուխարինական և բուրժուա-նացիոնալիստական լըրտեսների, դիվերսանտների ու վնասարարների, վորոնք սերտաճել են ոտարերկրյա հետախուզութունների հետ, դարձել են Փաշիստական պահնորդական բաժինների գործակալները: Նրանց դավաճանական աշխատանքը լուրջ վնաս հասցրեց ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսութան մի շարք ճյուղերում: Այդ լրտեսական վնասարարական բանդաների ջախջախումը ճանապարհ մաքրեց մեր յերկրում սոցիալիստական տնտեսութան հետագա ու ել ավելի հզոր հաջողութունների համար:

3. Յերկրորդ հնգամյա պլանով առաջադրված՝ աշխատավորների նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացման խնդիրը, ժողովրդական սպառման մակարդակի 2 անգամ և ավելի բարձրացումով, նույնպես կատարված է:

Բանվորների և ծառայողների թվական կազմը ժողովրդական

տնտեսութան բոլոր ճյուղերում յերկրորդ հնգամյակի ընթացքում աճել է 17,6 տողոսով: Բանվորների և ծառայողների տարեկան միջին աշխատավարձն ամբողջ ժողովրդական տնտեսութան մեջ 1937 թվին՝ 1932 թվի համեմատությամբ՝ աճել է 113,5 տողոսով, այսինքն՝ ավելի քան 2 անգամ: Բանվորների և ծառայողների աշխատավարձի ֆոնդը՝ յերկրորդ հնգամյա պլանով սահմանված 55 տողոս աճման փոխարեն՝ աճել է 150 տողոսով, այսինքն՝ ավելացել է 2,5 անգամ: Բանվորների և ծառայողների կուլտուր-կենցաղային սպասարկման վրա (լուսավորութուն, առողջապահութուն և այլն) կատարվող պետական ծախսերն այս տարիների ընթացքում աճել են 4,4 միլիարդ ռուբլուց հասնելով մինչև 14 միլիարդ ռուբլու, այսինքն՝ ավելի քան 3 անգամ: Յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում զբաղիտեն աճել է կոլտնտեսականների ունևորութունը: Կոլտնտեսականների համախառն յեկամուտը 4 տարվա ընթացքում (1933—1937 թ. թ.) ավելացել է ավելի քան 2,7 անգամ, իսկ կոլտնտեսականների միջև ըստ աշխուրդի բաշխվող դրամական յեկամուտներն այդ տարիների ընթացքում ավելացել են 4,5 անգամ:

1937 թվականին լայն սպառման առարկաների արտադրութունը՝ 1932 թ. համեմատությամբ՝ աճել է ավելի քան 2 անգամ: Մի շարք կարևոր մթերքների և լայն սպառման իրերի դժով ձեռք է բերվել արտադրութան վոչ միայն կրկնապատկում, այլև յեռապատկում: Պետական-կոոպերատիվ սպրանքաշրջանառութունը յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում աճել է ավելի քան 3 անգամ, իսկ կոլտնտեսային առևտրի հետ միասին այն՝ 1932 թվականի 47,8 միլիարդ ռուբլուց 1937 թվականին բարձրացել է 143,7 միլիարդ ռուբլու: Լայն սպառման սպրանքների մանրածախ գների իջեցման դժով յերկրորդ հնգամյակի առաջադրանքների թերակատարումը ծածկված է բանվորների և ծառայողների աշխատավարձի չափերի՝ հնգամյակով նախատեսվածից զգալիորեն ավելի մեծ բարձրացումով, ինչպես նաև կոլտնտեսութունների և կոլտնտեսականների դրամական յեկամուտների կատարված զգալի ավելացումով:

Յերկրորդ հնգամյակի տարիներին ընթացքում ԽՍՀՄ-ում կատարված է իսկական կուլտուրական հեղափոխութուն: Տարրական և միջնակարգ դպրոցում սովորողների թիվը 21,3 միլիոնից աճել է մինչև 29,4 միլիոն, ըստվորում 5—7-րդ դասարաններում սովորողների թիվը կրկնապատկվել է, իսկ 8—10-րդ դասարաններում սովորողների թիվն ավելացել է 15 անգամ: Բարձրա-

գույն ուսումնական հաստատություններում սովորողներին թիվը բարձրացել է մինչև 550 հազարի: Կուլտուրական շինարարությունը ծավալվել է նաև մյուս բոլոր ճյուղերում:

ԽՍՀՄ-ի բոլոր միութենական հանրապետություններում զոչալի հաջողություններ են ձեռք բերվել ինդուստրիալիզացիայի և բնակչության նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացման գործում, բոլշևիկյան ազգային կազմերի ստեղծման, ամբողջ ազգային, բովանդակություն սոցիալիստական, կուլտուրայի վերելքի գործում: Հատկապես մեծ էլին նյութական և կուլտուրական վերելքի տեմպերը Խորհրդային Արևելքի ժողովուրդների մոտ:

4. Յերկրորդ հնգամյա պլանի հաղթական կատարման և սոցիալիզմի ձեռք բերված հաջողությունների հիման վրա, ԽՍՀՄ-ը յերրորդ հնգամյակում թևակոխեց դարդացման նոր շրջան, անդասակարգ սոցիալիստական հասարակութայն կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը, յերբ վճռողական նշանակություն է ստանում աշխատավորների կոմունիստական դաստիարակություն գործը, կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը մարդկանց՝ կոմունիզմ կառուցողների զիտակցության մեջ:

Ձի կարելի, սակայն, նվազեցնել այդ վիթխարի խնդրի լուծման դժվարությունները, մանավանդ թշնամական կապիտալիստական շրջապատման պայմաններում: Առավել ևս, վոր չնայած առաջին ու յերկրորդ հնգամյակների հաջող կատարմանը, չնայած մեր արդյունաբերություն գարգացման ուկորդային տեմպերին, չնայած այն բանին, վոր արտադրության տեխնիկայով ԽՍՀՄ-ի արդյունաբերությունն առաջ է անցել կապիտալիստական առաջավոր յերկրներից, — չնայած այս ամենին, մենք տնտեսական տեսակետից դեռ չենք հասել առավել դարդացած կապիտալիստական յերկրներին:

ԽՍՀՄ-ը դարձել է տնտեսապես անկախ յերկիր, վորն իր տնտեսությունը և պաշտպանություն կարիքներն ապահովում է ամբողջ անհրաժեշտ տեխնիկական սպառազինմամբ: Իր դարդացման տեմպերով ԽՍՀՄ-ի արդյունաբերությունն աշխարհում առաջին տեղն է կանգնած: Մինչդեռ կապիտալիստական յերկրներին արդյունաբերությունը, 1929 թ. վերջին սկսված ամենաժանր տնտեսական ճգնաժամից հետո, 1937 թվականին հասել էր 1929 թ. մակարդակի հալիվ 103,5 տոկոսին, իսկ 1937 թ. յերկրորդ կեսից, նոր ճգնաժամի հարվածներին տակ, նորից գլորվել է ցած, — ԽՍՀՄ-ի

ամբողջ խոշոր ու մանր արդյունաբերությունը 1937 թվականին հասել էր 1929 թ. մակարդակի 371 տոկոսին, իսկ ԽՍՀՄ-ի ամենախոշոր արդյունաբերությունը — այդ մակարդակի 428 տոկոսին, վորը մինչպատերազմյան ժամանակի համեմատությամբ նշանակում է խոշոր արդյունաբերության արտադրանքի ավելացում ավելի քան 7 անգամ: 1938 թվականին ԽՍՀՄ-ի ամբողջ արդյունաբերություն արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ ավելացավ դարձյալ 11 տոկոսով և հասավ 1929 թ. մակարդակի 412 տոկոսին, իսկ խոշոր արդյունաբերության դժով՝ 1929 թ. մակարդակի նույնիսկ 477 տոկոսին, — այնինչ կապիտալիզմի յերկրներում 1938 թվականին արդյունաբերական արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել էր 13,5 տոկոսով և ընկել, հասնելով 1929 թ. մակարդակի 91 տոկոսին:

Կապիտալիզմին հակադիր, վորտեղ ըստ յերկրների դարդացման մեծ անհամաչափություն պայմաններում վերջին տասնամյակի ընթացքում արդյունաբերություն մեջ՝ ամբողջությամբ վերցրած՝ չի յեղել աճում, այլ կատարվել է արդյունաբերական արտադրանքի նկատելի նվազում, — ԽՍՀՄ-ում մենք ունեն յինք արդյունաբերություն անչեղ ու արագ վերելք, տարեցտարի արդյունաբերական արտադրանքի անման բարձր տեմպեր: Սակայն, նկատի ունենալով, վոր անցյալում մեր յերկիրը յեղել է տնտեսական տեսակետից ծայրահեղորեն հետամնաց, ԽՍՀՄ-ի արդյունաբերություն գարգացման մակարդակը, բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող արտադրանքի չափերի իմաստով, այժմ էլ դեռ զգալիորեն ցածր է Յեվրոպայի և Ամերիկայի՝ տեխնիկա-տնտեսական տեսակետից առավել դարդացած կապիտալիստական յերկրներից: Հայտնի յե, վոր մեր յերկրում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում է զգալիորեն ավելի քիչ քանակություն կարդյունաբերական արտադրանք, քան այնպիսի յերկրներում, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան: Այսպես, որինակ, յերկրորդ հնգամյակի վերջին ԽՍՀՄ-ում բնակչութայն յուրաքանչյուր շնչին ընկնում էր — ելեկտրոններ — գիա՝ 2-ից ավելի անգամ պակաս, քան Ֆրանսիայում, մոտ 3 անգամ պակաս, քան Անգլիայում, 3,5 անգամ պակաս, քան Գերմանիայում, 5,5 անգամ պակաս, քան ԱՄՆ-ում. չուգում — 2-ից ավելի անգամ պակաս, քան Անգլիայում ու Ֆրանսիայում, 2,5 անգամ պակաս, քան Գերմանիայում, 3 անգամ պակաս, քան ԱՄՆ-ում. պոպուլատ ընկնում էր համարյա 2 անգամ պակաս, քան

Ֆրանսիայում, համարյա 3 տնդամ պակաս, քան Անգլիայում ու Գերմանիայում, համարյա 4 անգամ պակաս, քան ԱՄՆ-ում. Բարաժուխ ԽՍՀՄ-ում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր մի փոքր պակաս, քան Ֆրանսիայում և զգալիորեն պակաս, քան ԱՄՆ-ում, Անգլիայում ու Գերմանիայում:

ԽՍՀՄ-ը բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող՝ արտադրանքի չափերի տեսակետից դեռևս հեռ է մնում նաև արդյունաբերական այնպիսի ապրանքների դժով, ինչպես դործվածքները, թուղթը, ոճառը և միջանի այլ ապրանքներ:

Տեխնիկա-տնտեսական տեսակետից առավել զարգացած կապիտալիստական յերկրների համեմատությամբ ԽՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի չափերի այդ անբավարարությունը պետք է լիովին լիկվիդացիայի յենթարկվի, վորպեսզի ապահովվի կոմունիզմի վերջնական հաջողությունը կապիտալիզմի դեմ նրա պատմական մրցության մեջ:

5. Այժմ, յերբ ԽՍՀՄ-ը կազմավորվել է վորպես սոցիալիստական պետություն, հիմնականում ալարտել է ժողովրդական տնտեսություն տեխնիկական վերակառուցումը և արտադրություն տեխնիկայի մակարդակով արդյունաբերություն և գյուղատնտեսություն մեջ կանգնած է Յեվրոպայի ամեն մի կապիտալիստական յերկրից առաջ, — այժմ մենք կարող ենք և պետք է ամբողջ հասակով պրակտիկ կերպով դենք ու իրականացնենք ԽՍՀՄ-ի հիմնական տնտեսական խնդրի լուծումը — տնտեսական տեսակետից ևս հասնել ու առաջ անցնել Յեվրոպայի առավել զարգացած կապիտալիստական յերկրներից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից, վերջնականապես լուծել այդ խնդիրն ամենամոտիկ ժամանակվա ընթացքում:

Դրա համար անհրաժեշտ է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական զինման հետագա զգալի աճումը և, հետևապես, մեքենաշինություն ու ամբողջ ծանր արդյունաբերություն ամեն կերպ զարգացումը, արտադրություն ամբողջ կազմակերպման ու տեխնոլոգիայի վճռական բարելավումը՝ լայնորեն արմատացնելով գիտություն նորագույն նվաճումներն ու հայտնադործումները, արտադրական կարերի քանակական ու, մանավանդ, վորակական աճումը և տեխնիկայի բարձր յուրացումը և արդյունաբերություն մեջ, տրանսպորտում ու գյուղատնտեսություն մեջ: Լենինի այն ցուցումին համապատասխան, վորք «աշխատանքի արտադրողականությունը, վերջին հաշվով, ամե-

նադլխադորն է նոր հասարակարգի հալթանակի համար», մենք պետք է ապահովենք սոցիալիստական մրցություն և ստալխանովյան շարժման ամեն կերպ ծավալումը, աշխատանքային կարգապահություն անշեղ ամրապնդումը բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկներում, բոլոր կոլտնտեսություններում, մենք պետք է ապահովենք բանվորների, գյուղացիների, ինտելեգենցիայի աշխատանքի՝ սոցիալիստական հասարակարգին արժանի բարձր արտադրողականությունը:

Դրա հետ միասին անհրաժեշտ է ապահովել ժողովրդական յեկամտի այնպիսի աճում և ապրանքաշրջանառություն զարգացում, վորպեսզի յերբորդ հնգամյակի տարիների ընթացքում բարձրացնենք ժողովրդական սպառումը 1,5—2 անգամ: Դրա համար, ծանր և պաշտպանական ինդուստրիայի ուժեղ վերելքի հետ միասին, անհրաժեշտ է աշխատանք ծավալել լայն սպառման ապրանքների ու սննդամթերքների արտադրությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես նաև ապահովել բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձի համապատասխան աճման, կոլտնտեսականների յեկամուտների աճման հնարավորությունը:

Յերբորդ հնգամյակի այս հիմնական խնդիրներին համապատասխան, անհրաժեշտ է ապահովել քաղաքի և գյուղի աշխատավորների ամբողջ մասսայի կուլտուրական մակարդակի զգալի վերելքը, դեպի առաջ խոշոր քայլ կատարել բանվոր դասակարգի, սոցիալիստական հասարակություն ստաշավոր ու զեկավար ուժի, կուլտուրական-տեխնիկական մակարդակն ինժեներատեխնիկական աշխատանքի աշխատողների մակարդակին բարձրացնելու պատմական դործում:

Արդյունաբերություն և ամբողջ ժողովրդական տնտեսություն վիթխարի աճումը յերբորդ հնգամյակում և ընդհանուր-պետական պլանին համապատասխան նրա հետագա անընդմեջ վերելքն ապահովելու անհրաժեշտությունը, մանավանդ ԽՍՀ Միություն արտաքին շրջապատման մեջ իմպերիալիզմի ազդեցիկ ուժերի աճման պայմաններում, պահանջում են ստեղծել պետական խոշոր ռեգիոններ, ամենից առաջ վառելիքի, էլեկտրոնների դիալի և միքանի պաշտպանական արտադրությունների դժով, ինչպես նաև տրանսպորտի զարգացման դժով, ճիշտ տեղադրելով այն ըստ յերկրի համապատասխան շրջանների, վերացնելով վոչ-արտադրողական ու հեռավոր փոխադրումները և յերկրի հիմնական

տնտեսական ոլջախները տեղում ապահովելով առավելագույն քանակութեամբ բնասութեանը:

ՀամԿ(բ)Կ XVIII համագումարը հաստատում է ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսութեան զարգացման՝ ԽՍՀՄ-ի Պետական Պլանային Հանձնաժողովի կողմից ներկայացված և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի ու ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիտեաների Խորհրդի կողմից ընդունված՝ յերրորդ հնգամյա պլանի հետևյալ առաջադրանքները:

II. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ ՊԼԱՆԵՆ ԸՍՏ ՅԵՐՐՈՐԴ ԷՆԳԱՄՅԱԿԻ

1. ԽՍՀՄ-ի ամբողջ արդյունաբերութեան արտադրանքի ծավալը 1942 թվականի՝ յերրորդ հնգամյակի վերջին տարվա համար սահմանել 180 միլիարդ ռուբլի (1926—1927 թ.թ. դներով)՝ 1937 թվականի 95,5 միլիարդ ռուբլու հանդեպ, այսինքն՝ յերրորդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի աճումը 88 տոկոսով:

ԽՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի աճման տարեկան միջին տեմպը յերրորդ հնգամյակի համար սահմանել 13,5 տոկոս, ընդվորում արտադրութեան միջոցների արտադրման տարեկան միջին աճը սահմանել 15,2 տոկոս, իսկ սպառման առարկաների արտադրութեան դժով՝ 11 տոկոս:

2. Յերրորդ հնգամյակի վերջի, այսինքն՝ 1942 թվականի համար սահմանել արդյունաբերութեան կարևորագույն ճյուղերի արտադրանքի հետևյալ չափը:

	1942 թ.	1942 թ. տոկոսներով՝ 1937 թ. նկատմամբ
Ամբողջ արդյունաբերութեանը (1926—27 թ. թ. դներով), միլիարդ ռուբլիներով	180	188
այդ թվում՝		
արտադրութեան միջոցների արտադրումը	112	203
սպառման առարկաների արտադրութեանը	68	169
Մեքենաշինութեան և մետաղի մշակում (1926—27 թ. թ. դներով), միլիարդ ռուբլիներով	62	225
Մաքիտորալ շոգեքարչեր (փոխադրած պայթանական «Ճ» և «Շ» շոգեքարչերի), հատերով	2-090	132
Սպրանքատար վազոնների՝ յերկուսնակ վազոնների հաշվով, հազար հատերով	90	153

Ալտոմոբիլ, հազար հատերով	460	200
Երեկտրոեներգիա, միլիարդ կիլովատ-ժամերով	75	206
Քարածուխ, միլիոն տոններով	230	171
Հում նավթ դազով, միլիոն տոններով	54	177
Ֆոսֆ, միլիոն տոններով	49	206
Չուգուն, միլիոն տոններով	22	152
Պողպատ, միլիոն տոններով	27,5	156
Պրոկատ, միլիոն տոններով	21	162
այդ թվում բարձրորակ, միլիոն տոններով	5	199
Քիմիական արդյունաբերութեան (1926—27 թ.թ. դներով), միլիարդ ռուբլիներով	13,4	227
Յեմենա, միլիոն տոններով	10	183
Շինափայտի փոխադրում, միլիոն խոր. մետրերով	200	180
Սղոցած փայտեղեն, միլիոն խոր. մետրերով	45	156
Թուղթ, հազար տոններով	1300	156
Բամբակեղեն գործվածքներ, միլիոն մետրերով	4900	142
Իրդե գործվածքներ, միլիոն մետրերով	175	167
Կաշի կոշիկեղեն, միլիոն դոլլերով	235	143
Շաքարավազ, հազար տոններով	3500	144
Կոստերով, միլիոն տոններով	1800	206

3. Ըստամենայնի զարգացնելով մեքենաշինութեանը, վորին առաջատար դեր է պատկանում ժողովրդական տնտեսութեան տեխնիկական սպառազինման ասպարիզում, ապահովել առաջավոր տեխնիկայի արմատացումը ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում և ԽՍՀՄ պաշտպանութեան բոլոր տեսակների համար՝ պետութեան արդի պահանջներին համապատասխան: Մինչև յերրորդ հնգամյակի վերջը մեքենաշինութեան արտադրանքն ավելացնել 2,25 անգամ, այսինքն՝ արդյունաբերութեան ընդհանուր աճումից զգալիորեն ավելի: Ապահովել ամեն տեսակ դազդյաչների արտադրութեանը, վճռականորեն բարձրացնելով մեծ արտադրողականութեան ունեցող ու հատուկ դազդյաչների, մանավանդ ավտոմատների և կիսավտոմատների տեսակարար կշիռը: Մետաղ կտրող դազդյաչների թողարկումը ավելացնել՝ 1942 թվականին հասցնելով 70 հազար հատի՝ 1937 թվականի 36 հազար հատի դիմաց, դազդյաչների ասորտիմենտը հասցնելով 800 տիպաչափի:

Հաղթահարել եներդետիկ մեքենաշինութեան համեմատաբար հետ մնալը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսութեան հարաճուն պահանջներից: Հնգամյակի ընթացքում շոգետուրբինների թողարկումն ավելացնել 4,8 անգամ, շոգեկաթսաներինը՝ 4,6 անգամ: Ըստամենայնի ընդարձակել և ավելացնել 12 հազար կիլովատ և

ավելի ջիջ կարողութուն ունեցող միջակ ու փոքր տուրքինների տեսակարար կշիռն արտադրութեան մեջ: Յուրացնել հզոր հիդրոտուրքինների արտադրութունը Կուլբիչևի հիդրոհանգուցի համար:

Հատուկ ուշադրութուն նվիրել լուծմոքիների, ստացիոնար ու նավային դիզելների, առաջին հերթին արագաշարժ դիզելների, ինչպես և զառով աշխատող շարժիչների արտադրութեան զարգացմանը: Գազդեներատորների փոխադրել անտառահատման ասպարիզում աշխատող բոլոր մեքենաները, ինչպես և գյուղատնտեսութեան տրակտորային պարկի և ավտոմոբիլային պարկի զգալի մասը:

Հաղթահարել շինարարական մեքենաների ու մեխանիզմների արտադրութեան, ինչպես նաև շինարարական գործիքների թողարկման հետ մնալը:

Ուժեղացնել քիմիական արդյունաբերութեան համար բարդ ապարատներն ու սարքավորման արտադրութունը և լիովին ապահովել քիմիական արդյունաբերութեան հզոր աճումը: Յուրացնել բամբակեղենի ու բրդեղենի ֆաբրիկաների համար մեքենաների նոր տիպերի արտադրութունը, վերացնել մանածագործական սարքավորման արտադրութեան հետ մնալը, վատերների թողարկումը մինչև հնգամյակի վերջը ավելացնելով վեց անգամ: Ծովային և ովկիանոսային տրանսպորտն ապահովել ժամանակակից նավերի բոլոր տեսակներով և նավաշինարարութեան համար ստեղծել **այնպիսի արտադրական կարողութուններ, Վորոնք բավականանան ԽՍՀՄ-ի ծովային ու գետային տրանսպորտի աճող պահանջները հայրենի արտադրութեամբ ապահովելու համար:** Ընդարձակել ավտոմատիկ և տեխ-մեխանիկական կառավարման ապարատների արտադրութունը:

4. Ամեն կերպ զարգացնել արդյունաբերութեան ածխային ու նավթային նյութերը, վորոնք հանդիսանում են յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսութեան վառելանյութային բաղան: Ածխի հանույթը զարգացնել մինչև այն մակարդակը, վորն ապահովի վոչ միայն յերկրի ընթացիկ պահանջների բավարարումը, այլև տնտեսական պաշարների ու պետական ռեզերվների ստեղծումը: Ապահովել ածխի հանույթի առավել բարձր տեմպեր Ուրալի ածխային շրջաններում, Մերձմոսկովյան ավազանում, Հեռավոր Արևելքում ու Միջին Ասիայում և այդտեղ ածխի հանույթը յերթորդ հնգամյակում ավելացնել՝ Ուրալում 2,8 անգամ, Մերձ-

11-2822794

մոսկովյան ավազանում՝ 2,4 անգամ, Հեռավոր Արևելքում՝ 2,5 անգամ և Միջին Ասիայում՝ 4,4 անգամ: Յերրորդ հնգամյա պլանի ժամանակաշրջանում դորը ածխի հանույթն ավելացնել 2,6 անգամ: Տեղական ածխի հանույթի նոր բազաներ ստեղծել յերկրի այն բոլոր շրջաններում, վորտեղ կան թեկուզ փոքր ածխահանքեր, և դրանց զարգացմանը զուգընթաց, տեղական արդյունաբերութեան ձեռնարկությունները, կոմունալ ձեռնարկությունները, դպրոցները, հիվանդանոցներն ու հիմնարկությունները հեռվից բերվող վառելանյութից փոխադրել տեղական վառելանյութի: Ավարտել ածխի հանույթի կոմպլեքսային մեքենացումը յերկրի բոլոր ածխային շրջաններում և ածխի հանույթը կազմակերպել ցիկլային աշխատանքի զբաղիկը՝ հանքահատների աշխատանքի ստանդարտի արտադրողականութեան այդ հիմքը յերկրի բոլոր ածխային շրջաններում արմատացնելու հիման վրա:

Վորգայի և Ուրալի միջև ընկած շրջանում ստեղծել նավթային նոր բազա՝ «յերկրորդ Բազա»: Ապահովել նավթի հանույթի և նավթի վերամշակման ծրագիրը, արագորեն զարգացնելով յերկրաբանական-հետախուզական աշխատանքները, արմատացնելով նավթի հանույթի ու վերամշակման բարձր տեխնիկա՝ փորման պտուտակային յեղանակը, փորումն ճնշմամբ, կոմպրեսորային և խոր-պոմպային հանում, շահագործման փակ մեթոդ՝ գազից բենզին հավաքելով ու հանելով: Կառուցել նավթամուղների ու նավթային բազաների ցանց, մանավանդ ԽՍՀՄ-ի արևելյան շրջաններում:

Ծավալել տորֆի արդյունաբերութունը, մանավանդ այնպիսի մարզերում, ինչպիսին և Իվանովոյի մարզը՝ հեռավոր վայրեր փոխադրելը կրճատելու նպատակով, ինչպես և ամեն կերպ ուժեղացնել թերթաբերի ոգտադործումը:

Լայն ծավալել վառելանյութերի բոլոր տեսակների գազացումը և ածուխների ստորերկրյա գազացումը, ածուխների ստորերկրյա գազացումը յերրորդ հնգամյակում վերածելով արդյունաբերութեան ինքնուրույն ճյուղի: Յերրորդ հնգամյակի ընթացքում նավթահանքերում և զուտ գազահանքերում գազի հանույթն ավելացնել 3,5 անգամ: Կառուցել և շահագործման հանձնել ստորերկրյա գազիֆիկացիայի մի շարք արդյունաբերական կայաններ Դոնբասում, Մերձմոսկովյան ավազանում և ԽՍՀՄ-ի արևելքում, ոգտադործելով ստացվող գազը եներգետիկայի, քիմիական արդյունաբերութեան ու կոմունալ տնտեսութեան համար:



Ջարգացնել կոքսային ու դոմնային գազերի ոգտադործումը, կա-
ռուցելով մադիստրալ գազատարների ցանց, առաջին հերթին Դոն-
բասում:

Կարծր վառելանյութի հիդրացման հիման վրա ստեղծել աբ-
հեստական հեղուկ վառելանյութի արդյունաբերություն, առա-
ջին հերթին Արևելքում, ինչպես և ստեղծել գաղից հեղուկ վա-
ռելանյութ սինթեզելու արդյունաբերություն:

5. Ելեկտրաուտեսուրքյան բնագավառում վերացնել այն մաս-
նակի անհամաչափությունը, վորը գոյություն ունի արդյունա-
բերություն մեծ աճման և ելեկտրոկայանների կարողությունների
անբավարար ավելացման միջև, վորպեսզի ելեկտրոկայանների
աճումը գերազանցի վեճ միայն արդյունաբերության աճումից,
այլև ապահովի ելեկտրական կարողությունների զգալի ուժեղվ-
ների ստեղծումը: Դրան համապատասխան՝ հնգամյակի ընթաց-
քում ելեկտրոկայանների ընդհանուր կարողությունն ավելացնել
2,1 անգամ: Ջերմային ելեկտրոկայանների շինարարության մեջ
անցնել 25 հազար և ավելի պակաս կիրվատ կարողություն ունե-
ցող փոքր ու միջակ ելեկտրոկայաններին: Վորպես սխալ և ժո-
ղովրդական անտեսություն համար վնասակար մի բան՝ դատա-
պարակ խոշոր ելեկտրոկայաններով տարվելը՝ ի վնաս փոքր ու
միջակ ելեկտրոկայանների: Երջանային ջերմաեկտրոկայանների
կարողությունը յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է հաս-
տատի կառավարությունը: Լայնորեն արձատարենք նորագույն ե-
ներգետիկ տեխնիկան, գոլորշու բարձր ճնշումն ու դերաջերմու-
թյունը, ջերմացման նորագույն տուրբինների գործադրումը և
եկտրոկայանների ու ցանցային անտեսություն արտադրական
հիմնական պրոցեսների ավտոմատացումը:

6. Քիմիական արդյունաբերությունը դարձնել արդյունաբե-
րության առաջատար այն ճյուղերից մեկը, վորը լիովին բավա-
րարի ժողովրդական անտեսություն և յերկրի պաշտպանություն
պահանջները: Յերրորդ հնգամյակը քիմիայի—հնգամյակ է:
Համազումբարը վորոշում է քիմիական արդյունաբերության ար-
ձատարանքն ավելացնել 2,3 անգամ, այսինքն՝ զգալիորեն ավելի,
տաղրանքն ավելացնել 2,3 անգամ, առաջին հիմնական արհեստա-
կան թելի ու պլաստիկ մասսաների արտադրությունը: Ստեղծել
որդանական սինթեզի նոր ճյուղեր (սինթետիկ սպիրտ, քացա-
խաթթու և այլն), հիմնվելով նավթի վերամշակման, կառուցուկի,

կոքսի արտադրություն ու բնական գազերի կողմնակի նյութերի
ոգտադործման վրա: Քիմիական արդյունաբերություն բոլոր ճյու-
ղերում ապահովել տեխնոլոգիական հաստատուն ուժի մ և նորա-
գույն նվաճումների անշեղ արձատարում, այն է՝ ինտենսիվաց-
նել քիմիական արտադրությունը, անցնել պարբերական պրոցեսից
անընդհատի, ոգտադործել բարձր ճնշումները, դարգացնել ելեկ-
տրոքիմիական մեթոդները: Մեքենացնել աշխատընկալ պրոցես-
ները քիմիական արդյունաբերության մեջ, դարգացնել արտա-
դրության ավտոմատացումը:

7. Սև մետալուրգիայի բնագավառում, վորի դարգացումը
չառ կողմերով վորոշում է ամբողջ արդյունաբերության ու ժո-
ղովրդական անտեսություն աճումը և այդ պատճառով պահան-
ջում է հատուկ մշտական հոգատարություն՝ արտադրական կա-
րողություններն ավելացնելու մասին,—հասնել արտադրության
անշեղ ու լուրջ վերելքի: Յերրորդ հնգամյակը հատուկ պողպատ-
ների հնգամյակ է: Համազումբարը վորոշում է յերկու անգամ ա-
վելացնել բարձրորակ պրոկատի թողարկումը և ապահովել հա-
տուկ պողպատների, այն է՝ կարծր ձուլվածքների, չժանդոտող,
թթվալիպյուն ու ջերմալիպյուն, դործիքային, պրեցեզիտոն, տրանս-
ֆորմատորային ձուլվածքների, ինչպես և Ֆերրոձուլվածքների
թողարկման խիստ ավելացումը: Լայնորեն ծավալել փայտած-
խային չուղունների ձուլումը՝ ծծմբից ու ֆոսֆորից ա-
զատ հանքերից, վերացնել պրոկատային դադրյահանքի վնասաբա-
րական մասնագիտացումը, վորի հետևանքն են լինում մետաղի
հանդիպական ու հեռավոր փոխադրումները, և յերկրի հիմնա-
կան մետալուրգիական բաղանջում ապահովել մետաղի ամենա-
զործածական բոլոր տեսակների պրոկատը: Հեռավոր Արևելքում
ստեղծել մետալուրգիական նոր բազա՝ մետալուրգիական լիակա-
տար ցիկլով, տեղերի մեքենաշինության բոլոր պահանջներն ա-
պահովելու համար: Չուղունի ձուլման մեջ Միություն արևելյան
չրջանների ունեցած տեսակարար կշիռը հնգամյակի ընթացքում
հասցնել յերկրի ընդհանուր ձուլման 28 տոկոսից 35 տոկոսի:

8. Գունավոր մետաղների արտադրությունն ավելացնել այն
չափով, վոր ապահովվի ժողովրդական անտեսություն և յերկրի
պաշտպանություն արագորեն աճող պահանջների բավարարումը:
1942 թվականին սև պղնձի ձուլումն ավելացնել 2,8 անգամ, ա-
լյումինիումի ձուլումը (ներառյալ սիլումինը)՝ 3,3 անգամ՝ հա-
մեմատած 1937 թվականի հետ: Ապահովել արճճի, ցինկի, նիկելի,

անազի, մազնիումի, վոլֆրամի, մոլիբդենի արտադրութեան բարձր տեմպեր: Լայնորեն արմատացնել դունավոր մետաղները փոխարինող նյութերը մեքենաշինութեան բոլոր ճյուղերում:

9. Վերջ տալ անտառային արդյունաբերութեան հետ մնալուն: Իրականացնել անտառամթերումների արտադրական բոլոր պրոցեսների կոմպլեքսային լայն մեքենացումը՝ գազոգեներատորային շարժիչների և շոգեշարժիչների բաղաձայն վրա: Մաքսիմալ չափով ոգտագործել ձմեռային անտառամթերումների սեզոնային առավելութունները, միաժամանակ ապահովելով փայտանյութի պատրաստումն ամբողջ տարվա ընթացքում: Անտառային բորսաներում ստեղծել բնական ճանապարհով չորացրած փայտեղենի խոշոր պաշարներ: Ամեն կերպ զարգացնել թղթի և փայտաքիմիական արդյունաբերութունը, մանավանդ փայտանյութի հիդրոլիզը:

10. Համագումարը վորոշում է լայն սպառման առարկաների արտադրութունը յերրորդ հնգամյակում ավելացնել 1,7 անգամ:

Թեթև արդյունաբերութեան մեջ լրիվ ոգտագործել հումքի աճած ռեսուրսները՝ արտադրութունը մեծացնելու, արտադրանքի ասորտիմենտն ընդարձակելու և վորակը բարձրացնելու համար, միաժամանակ ստեղծելով հումքի անհրաժեշտ պաշարներ: Վերացնել այն անհամաչափութունը, վորը գոյութուն ունի նախապատրաստող և մանող ցեխերի միջև, ինչպես և ջուլհակագործութեան և հետ մնացած մանածագործութեան միջև: Տեխնիկայես կատարելագործել բամբակեղենի արդյունաբերութեան սարքավորումը՝ արմատացնել բարձր արագութեամբ աշխատող և միապրոցես մեքենաներ, բարձր ձգումների գործիքներ, ջուլհակային ավտոմատիկ դադրյաչներ:

Սննդարդյունաբերութեան մեջ զգալիորեն ընդարձակել արտադրանքի, մանավանդ բարձր և առաջին տեսակների արտադրանքի ասորտիմենտը, բարելավել թողարկվող մթերքների վորակը, ստեղծել կուլինարիայի և կիսաֆաբրիկատների մասսայական արտադրութուն: Վճռականորեն հաղթահարել ձկնարդյունաբերութեան հետ մնալը:

11. Ըստ ամենայնի զարգացնել տեղական արդյունաբերութունը և արհեստագործական կոպիերացիան, վորոնք խոշոր աշխուր են հանդիսանում աշխատավորների աճող պահանջները բարավարելու համար: Անբավարար համարելով դրանց աճման ներկա տեմպը, հնգամյակի ընթացքում վորչ պակաս քան յերկու անգամ ավելացնել տեղական արդյունաբերութեան և արհեստագործական կոպիերացիայի արտադրանքի թողարկումը: Լայն հանդիսանում է տեղական արդյունաբերութեան և արհեստագործական կոպիերացիայի զարգացումը, անհրաժեշտ է ամեն կերպ զարգացնել վորակը և քանակը: Համագումարը յերրորդ հնգամյակում ավելացնում է արտադրանքի թողարկումը 1,7 անգամ: Թեթև արդյունաբերութեան մեջ լրիվ ոգտագործել հումքի աճած ռեսուրսները՝ արտադրանքի ասորտիմենտն ընդարձակելու և վորակը բարձրացնելու համար, միաժամանակ ստեղծելով հումքի անհրաժեշտ պաշարներ: Վերացնել այն անհամաչափութունը, վորը գոյութուն ունի նախապատրաստող և մանող ցեխերի միջև, ինչպես և ջուլհակագործութեան և հետ մնացած մանածագործութեան միջև: Տեխնիկայես կատարելագործել բամբակեղենի արդյունաբերութեան սարքավորումը՝ արմատացնել բարձր արագութեամբ աշխատող և միապրոցես մեքենաներ, բարձր ձգումների գործիքներ, ջուլհակային ավտոմատիկ դադրյաչներ:

ծական կոպիերացիայի արտադրանքի թողարկումը: Լայն սպառման առարկաների թողարկումն ավելացնելու հետ միասին, վոր հանդիսանում է տեղական արդյունաբերութեան և արհեստագործական կոպիերացիայի հիմնական խնդիրը, անհրաժեշտ է ամեն կերպ զարգացնել վառելանյութի տեղական տեսակների հանույթը և շինանյութերի արտադրութունը:

12. Արդյունաբերական արտադրանքի աճման համար սահմանված պլանը և նոր տեխնիկայի յուրացման հետագա խնդիրները պահանջում են աշխատանքի արտադրողականութեան զգալի աճում և արտադրանքի ինքնարժեքի յուրը իջեցում: Համագումարը յերրորդ հնգամյակի համար սահմանում է՝

ա) Յերրորդ հնգամյակի ընթացքում արդյունաբերութեան մեջ աշխատանքի արտադրողականութեան աճում 65 տոկոսով, վորը 1942 թվականին՝ 1937 թվականի դիմաց՝ պետք է ապահովի արդյունաբերական արտադրանքի աճը միմիայն ի հաշիվ աշխատանքի արտադրողականութեան ավելացման 62 միլիարդ ռուբլով:

բ) Հնգամյակի ընթացքում արդյունաբերական արտադրանքի ինֆլաթի իջեցում (1937 թվականի գներով) 11 տոկոսով, վոր պետք է պետութեան համար ապահովի 1942 թվականին՝ համեմատած 1937 թվականի հետ՝ 21 միլիարդ ռուբլու տնտեսում:

Անհրաժեշտ է ամեն կերպ բարձրացնել արտադրանքի վորակն արդյունաբերութեան բոլոր ճյուղերում, պայքար կազմակերպել արտադրութեան մեջ կորուստների դեմ, նվազեցնել հումքի, նյութերի, վառելանյութի և ելեկտրոններդիայի ծախսման նորմաները:

13. Համհ(բ)ի-ի XVIII համագումարը ամբողջ գյուղատնտեսութեան մեջ արտադրանքի աճումը սահմանում է 1937 թվականի 19,8 միլիարդ ռուբլուց (1926—27 թ.թ. գներով) մինչև 30,2 միլիարդ ռուբլի 1942 թվականին, այսինքն 53 տոկոսով: Գյուղատնտեսութեան կարևորագույն ճյուղերի համար Համագումարը հետևյալ առաջադրանքներն է տալիս՝

ա) Հացահատիկի գծով ապահովել հացահատիկի 7 միլիարդ փութ տարեկան միջին բերք յերրորդ հնգամյակում՝ համեմատած հացահատիկների 5,5 միլիարդ փութ տարեկան միջին բերքի հետ յերկրորդ հնգամյակում, այսինքն՝ աճում 27 տոկոսով:

բ) Տեխնիկական կուլտուրաների գծով 1942 թվականի հա-

մար՝ չաքարի ճակնդեղ—300 միլիոն ցենտներ բերք՝ մի հեկտարից 250 ցենտներ բերքատուլությամբ. բամբակ—հումք 32,9 միլիոն ցենտներ՝ մի հեկտարից 19 ցենտներ ջրովի բամբակի բերքատուլությամբ. թելատու վուշ—8,5 միլիոն ցենտներ՝ մի հեկտարից 4,6 ցենտներ բերքատուլությամբ:

դ) Անասունների թվի աճը և անասնաբուծության ապրանքային արտադրանքի աճումն այն չափով, վոր լիովին ապահովվի անասնաբուծության պրոբլեմի լուծումը ԽՍՀՄ-ում: Ձիերի թիվն ավելացնել 35 տոկոսով, խոշոր յեղջուրավոր անասուններինը՝ 40 տոկոսով, խոզերինը՝ 100 տոկոսով, վոչխարների և այծերի թիվը՝ 110 տոկոսով: Բարձրացնել անասնաբուծության մթերատուլությունը, բարելավելով անասունների ցեղայնությունը և արմատապես բարելավելով ցեղաբուծական գործը, ճիշտ շրջանացնելով ցեղերը, ամրացնելով կերի բազան, բարելավելով անասունների խնամքը:

դ) Մոսկվայի, Լենինգրադի, Բաղվի, Խարկովի, Ինչպես և Գոնբասի, Կուզբասի, Գորկու արդյունաբերական կենտրոնների և մյուս բոլոր խոշոր քաղաքների շուրջն ստեղծել կարտոֆիլաբանջարաբուծական ու անասնաբուծական բազաներ, վորոնք լիովին ապահովեն բանջարեղենի, կարտոֆիլի մատակարարումը և զգալի չափով կաթի ու մսի մատակարարումն այդ կենտրոններին:

յե) Ապահովել հացահատիկային և այլ կուլտուրաների ցանքսը թե՛ սելեկցիոն և թե՛ տեղական տեսակների բացառապես բարձրասորտ ու բարելավված ընտիր սերմերով: Կոլտնտեսություններում և խորհրդայնություններում արմատացնել արտադրանության և գուտ ցելերի կիրառմամբ ճիշտ ցանքաշրջանառություններ, վորոնք ապահովեն հողի արգասավորության զգալի ավելացումը, բերքատուլության աճումը և աճող անասնաբուծության համար կերի ամուր բազայի ստեղծումը:

զ) Յերրորդ հնգամյակում ավարտել գյուղատնտեսական աշխատանքների կոմպլեքսային մեքենացումը: Լայնորեն արմատացնել առաջավոր ազրոտեխնիկան՝ գիտականորեն ոգտազործելով գյուղատնտեսության առաջավորների գործնական մեծ փորձը:

ե) Գյուղատնտեսական արտադրության հետագա մեքենացման և աշխատանքի արտադրողականության աճման հիման վրա, խորհրդայնությունները գործնականում դարձնել բարձրար-

տադրողական, խիստ շահաբեր տնտեսություններ, վորոնք գյուղատնտեսական արտադրության կազմակերպման որինակ, նրա բարձր բերքատուլության ու մթերատուլության որինակ ծառայեն:

14. Համազումարը սահմանում է, վոր յերկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության աճումը 1937 թվականի 355 միլիարդ տոնն-կիլոմետրից 1942 թվականին պետք է հասնի 510 միլիարդ տոնն-կիլոմետրի. գետային տրանսպորտինը՝ 33 միլիարդից 58 միլիարդ տոնն-կիլոմետրի. ծովային տրանսպորտինը՝ 37 միլիարդ տոնն-կիլոմետրից 51 միլիարդ տոնն-կիլոմետրի: Տրանսպորտի կարևորագույն խնդիրն է՝ կարգավորել ապրանքաշրջանառության պլանավորումը՝ յերկաթուղային հեռավոր փոխադրումներն ամեն կերպ կրճատելու, հանդիպական ու վոչուացիոնալ փոխադրումները՝ վերացնելու և ջրային ու ավտոմոբիլային տրանսպորտի տեսակարար կշիռը յերկրի բեռնաշրջանառության մեջ ե՛լ ավելի բարձրացնելու նպատակով:

Գրան համապատասխան՝ Համազումարը տրանսպորտի ապարկոցում հետևյալ առաջադրանքներն է սահմանում յերրորդ հնգամյակի համար՝

ա) Լոկոմոտիվների պարկն ավելացնել 7·370 միավորով, այդ թվում՝ «ՓԸ» սերիայինը՝ 1·870 շոգեքարշով, կոնդենսացիոն շոգեքարշերինը՝ 3·200 միավորով, «ՄԸ» սերիայի մարդատար շոգեքարշերինը՝ 1·500 միավորով: Կոնդենսացիոն շոգեքարշերն առաջիկա տարիներին առաջատար տեղ պետք է գրավեն շոգեքարշերի բեռնային պարկում:

բ) Բեռնատար վագոնների վագոնային պարկն ավելացնել 178 հազար քառասունհինգերով, մարդատար վագոնների պարկը՝ 12 հազարով: Ինքնակապով սարքավորել գործող ապրանքատար պարկից 300 հազար վագոն և 4·000 մարդատար վագոն: Ավտոմատիկ արգելակներով սարքավորել գործող ապրանքատար պարկի 200 հազար վագոնները: Ընդարձակել շոգեքարշերի ու վագոնների նորոգման բազան, մանավանդ Ուրալի, Միջին Ասիայի, Սիբիրի, Հեռավոր Արևելքի յերկաթուղիներում:

գ) Յերկաթուղային տրանսպորտի և մանավանդ յերկաթուղային ճանապարհի հետագա վերակառուցումն ապահովելու համար յերրորդ հնգամյակում կանոցել և շահադործման հանձնել 11 հազար կիլոմետր նոր յերկաթուղիներ: Յերրորդ գիծ անցկացնել 8 հազար կիլոմետր տարածության վրա:

դ) Ելեկտրիֆիկացիայի յենթարկել 1·840 կիլոմետր յերկա-

թուղի, առաջին հերթին լեռնային յերկաթուղիները, այն դժերը՝ վորոնք լարված բեռնաշրջանառություն ունեն, ինչպես և մերձ-քաղաքային ուժեղ յերթեկեկություն ունեցող խոշորագույն հան-գույցները:

յե) Զարգացնել յերկաթուղային կայարանները և հանգույց-ները, առաջին հերթին այն ուղղություններում, վորոնք կապում են Գոնրասը Կրիվոյ Ռոզի, Լենինգրադի և Մոսկվայի հետ, Ու-րալի արևելյան շրջանները, Հյուսիսային յերկիրը, Մուրմանի-մարզը՝ ԽՍՀՄ-ի կենտրոնական մասի հետ, Արևմտյան Սիբիրը՝ Միջին Ասիայի հետ, Հարավ-Արևմտյան, Արևմտյան և Արևելյան յերկաթուղիներում:

զ) Վերացնել ջրային տրանսպորտի հետ մնալը, բարձրացնել նրա դերը ժողովրդական տնտեսության սպասարկման ասպարի-զում, մանավանդ մասսայական բեռների՝ փայտեղենի, հացա-հատիկի, ածխի, նավթի փոխադրության մեջ: Բարելավել ծո-վային ու գետային նավատորմի տեխնիկական վիճակը, լրացնել նավատորմը նավերի ավելի կատարելագործված տիպերով, լայ-նորեն արմատացնել զագոզեներատորային սարքավորումները գե-տային նավերում: Ընդարձակել նավանորոգման բազայի և ծո-վային նավահանգիստների շինարարությունը:

Լայն ձեռնարկումներ կիրառել գոյություն ունեցող ջրային ուղիները վերակառուցելու և կարգի բերելու ուղղությամբ, վե-րակառուցել Աստրախան—Գորկի—Ռիբինսկ—Մոսկվա ուղին այն հաշվով, վոր յերրորդ հնգամյակի վերջերին խորջրային տրան-զիտային ուղի ստեղծվի Աստրախանից մինչև Մոսկվա, ապահո-վելով բոլոր անցումներում առնվազն 2,6 մետր խորություն: Մավալել Վոլգա—Բալթիկ ջրային ուղու վերակառուցումը: Ներ-քին ջրային նավարկելի ուղիների ընդհանուր յերկարությունը հնգամյակի ընթացքում 101 հազար կիլոմետրից հասցնել 115 հա-զար կիլոմետրի:

Մինչև յերրորդ հնգամյակի վերջը Հյուսիսային ծովային ուղին զարձնել նորմալ կերպով գործող ջրային մագիստրալ, վոր ապահովի պլանաչափ կապը Հեռավոր Արևելքի հետ:

ե) Կազմակերպել ավտոմոբիլային տրանսպորտի կանոնավոր յերթեկեկություն ավտոմագիստրալներում, տրակտներում և բեռ-նային լարված յերթեկեկություն ունեցող քաղաքամերձ ճանա-պարհներում, յերկաթուղային կայարաններում ու ջրային ուղի-ներում: Հնգամյակի ընթացքում ավտոմոբիլագրումներն ավելաց-

նել 4,6 անգամ: Կառուցել և վերակառուցել 210 հազար կիլոմետր ճանապարհ, վճռականորեն ավելացնելով, համեմատած յերկրորդ հնգամյակի հետ, կատարելագործված գուղրոնած, ասֆալտա-բետոնած ու բետոնած ճանապարհների շինարարության տեսա-կարար կշիռը:

ը) Ավիո-տրանսպորտի գծով ավելացնել ողային ուղիների յերկարությունը, սարքավորել ողային մագիստրալների տրաս-ները, ընդարձակել ու բարելավել ավիո-տրանսպորտի համար վերերկրյա կառուցումները:

թ) Յերրորդ հնգամյակում աշխատանքի արտադրողականու-թյունը բարձրացնել 32 տոկոսով յերկաթուղային տրանսպորտում և 38 տոկոսով՝ ջրային տրանսպորտում, մեքենացնել բեռնելու և բեռնաթափելու աշխատանքները յերկաթուղային, ջրային և ավ-տոմոբիլային տրանսպորտում:

15. Համագումարն ընդգծում է, վոր անհրաժեշտ է մեծ չա-փով զարգացնել կապի բոլոր տեսակները, մանավանդ միջքաղա-քայինը:

Ավարտել հեռախոսային ուղղակի կապի հաստատումը Մոսկ-վայի և հանրապետական, յերկրային ու մարզային բոլոր կենտ-րոնների միջև, ինչպես և լրացնել կապի շառավիղային սխեման հանդուցային սխեմայով ԽՍՀՄ-ի խոշորագույն կենտրոնների մի-ջև: Լիովին ավարտել շրջանային կենտրոնների, գյուղխորհուրդ-ների, ՄՏԿ-ների և խորհրդատեսությունների հեռախոսացումը: 2,3 անգամ ավելացնել ընդունիչ ռադիո-տրանսլացիոն կետերի քանակը: Մի շարք խոշոր քաղաքներում կառուցել տելեվիզիոն կենտրոններ:

16. Յերրորդ հնգամյակում արտադրության աճման ծրագրի առաջադրանքները կատարելու կարևորագույն պայմանն է վորա-կյալ բանվորական կադրերի, տեխնիկների և ինժեներների պատ-րաստումը, ինչպես և նորագույն տեխնիկան արմատացնելու աշ-խատանքների լայն ծավալումը և արտադրության գիտական կազ-մակերպումը: Համագումարն անհրաժեշտ է համարում յերրորդ հնգամյա պլանում նախատեսել՝

ա) Դպրոցների և կուրսերի լայն ցանցի ծավալումը՝ սոցիա-լիստական աշխատանքի համար վորակյալ բանվորներ ու վար-պետներ պատրաստելու և վերապատրաստելու նպատակով,

բ) Տալ զանազան մասնագիտությունների 1,4 միլիոն տեխնիկ և բարձրագույն կրթությամբ՝ 600 հազար մասնագետներ:

III. ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԵՂԱԳԻՐՈՒՄՆ ԸՍՏ ՅԵՐՐՈՐԴ ԷՆԳԱՄՅԱԿԻ

1. Արտադրութեան աճման պլանին համապատասխան՝ ՀամԿ(բ)Կ XVIII Համագումարը կապիտալ աշխատանքների ծավալը ժողովրդական տնտեսութեան գծով ըստ յերրորդ հնգամյակի սահմանում է 180 միլիարդ ուրբուլ չափով (նախահաշիվային գործող գներով), յերկրորդ հնգամյակի 115 միլիարդ ուրբուլ փոխարեն, դրանից՝

ա) Արդյունաբերութեան մեջ—103,3 միլիարդ ուրբուլ՝ յերկրորդ հնգամյակի 58,6 միլիարդ ուրբուլ փոխարեն, այդ թվում՝ արտադրութեան միջոցներ արտադրող արդյունաբերութեան գծով—86,8 միլիարդ ուրբուլ՝ յերկրորդ հնգամյակի 49,8 միլիարդ ուրբուլ փոխարեն, կամ աճում 74 տոկոսով. լայն սպառման առարկաներ արտադրող արդյունաբերութեան գծով—16,5 միլիարդ ուրբուլ՝ յերկրորդ հնգամյակի 8,8 միլիարդ ուրբուլ փոխարեն, կամ աճում 88 տոկոսով:

բ) Տրանսպորտում—35,8 միլիարդ ուրբուլ՝ յերկրորդ հնգամյակի 20,7 միլիարդ ուրբուլ փոխարեն, կամ աճում 73 տոկոսով:

գ) Գյուղատնտեսութեան մեջ— 10,6 միլիարդ ուրբուլ, այդ թվում՝ ՄՏԿ-ներում—5,2 միլիարդ ուրբուլ, իրրիզացիայի և մեխորացիայի վրա—1,2 միլիարդ ուրբուլ:

2. Համագումարը հաստատում է նոր և յերրորդ հնգամյակում վերակառուցված ձեռնարկութեանների գործարկումը՝ 179 միլիարդ ուրբուլ արժողութեամբ (նախահաշիվային գործող գներով), յերկրորդ հնգամյակի 103 միլիարդ ուրբուլ փոխարեն:

Համագումարը նշում է, Վոր կապիտալ աշխատանքների սահմանված ծավալը և նոր ու վերակառուցված ձեռնարկութեանների գործարկման ծրագիրն ապահովում է ԽՍՀՄ-ի արտադրական-տեխնիկական բազայի հետագա մեծ աճումը և ժողովրդական տնտեսութեան կարևորագույն ճյուղերում կարողութեանների անհրաժեշտ ուղեղների գոյացումը: Յերրորդ հնգամյակում աճում են.

ա) արտադրական կարգադրությունները — ելեկտրոկայանների գծով՝ յերկրորդ հնգամյակի վերջում յեղած 8,1 միլիոն կիլովատից մինչև 17,2 միլիոն կիլովատի՝ յերրորդ հնգամյակում. ածխարդյունաբերութեան գծով—1,7 անգամ, յերրորդ հնգամյակի

վերջում շախտաների կարողութեանը հասցնելով մինչև 285 միլիոն տոնն ածխի. սև մետալուրգիայի գծով (չուգուն)—մինչև 24 միլիոն տոննի. գունալուր մետալուրգիայի գծով (պղինձ)—2,4 անգամ. ալյումինի գծով—3,8 անգամ. ավտոմոբիլային արդյունաբերութեան գծով—2,4 անգամ. բամբակե գործվածքեղենի արդյունաբերութեան գծով (իլիկներ)—1,5 անգամ:

բ) Հիմնական ֆունդերն ամբողջ ժողովրդական տնտեսութեան գծով—189,3 միլիարդ ուրբուլ մինչև 347,0 միլիարդ ուրբուլ կամ 83,6 տոկոսով, այդ թվում՝ արդյունաբերութեան գծով—68,2 միլիարդ ուրբուլ մինչև 142,4 միլիարդ ուրբուլ. գյուղատնտեսութեան գծով—23,2 միլիարդ ուրբուլ մինչև 31 միլիարդ ուրբուլ. տրանսպորտի գծով—38,7 միլիարդ ուրբուլ մինչև 69,1 միլիարդ ուրբուլ:

3. Համագումարը գտնում է, Վոր նոր շինարարությունը յերրորդ հնգամյակում ըստ ԽՍՀՄ-ի շրջանների տեղադրելիս՝ անհրաժեշտ է յեղել արդյունաբերութեանը հումքի աղբյուրներին և սպառման շրջաններին մոտեցնելուց, Վոչ-նացիոնալ ու չափից դուրս հեռավոր փոխադրումները լիկվիդացիայի յենթարկելու, ինչպես նաև ԽՍՀՄ-ի անցյալում տնտեսապես հետամնաց շրջանների հետագա վերելքի նպատակով: Դրան համապատասխան՝ յերրորդ հնգամյա պլանում անհրաժեշտ է.

ա) Միութեան հիմնական տնտեսական շրջաններում ապահովել տնտեսութեան կոմպլեքսային զարգացումը և կազմակերպել վառելիքի հանույթն ու մթերքների այնպիսի տեսակների արտադրութեանը, ինչպես ցեմենտը, ալեբաստը, քիմիական պարարտանյութերը, ապակին, թեթև ու մեծի արդյունաբերութեան մասսայական առարկաները, այդ շրջանների պահանջն ապահովող չափերով: Հատուկ նշանակութեան ունի արդյունաբերական այն խոշոր շրջանների ապահովումը տեղում՝ վառելիքով և դրժվար փոխադրելի միջանկ մթերքներով, Վորոնց կախումը մեծ քանակութեամբ բեռների հեռավոր փոխադրութեանից՝ ավելացել է նրանց արդյունաբերական աճման և քաղաքային բնակչութեան արագ ավելացման կապակցութեամբ:

Ամենուրեք մասսայական քանակութեամբ գործածվող այնպիսի սննդամթերքներ, ինչպես կարտոֆիլը, բանջարեղենը, կաթնեղեն ու մսեղեն մթերքները, ալյուրը, հրուշակեղենը, դարբնությունը, ինչպես նաև մասսայական սպառման մի շարք արդյունաբերական առարկաներ—գալանտերեյա, կարի արդյունաբերութեան

առարկաներ, կահույք, աղյուս, կիր և այլն, — սկսած և բավարար քանակութեամբ արտադրվեն յուրաքանչյուր հանրապետութիւնում, յերկրամասում և մարզում:

Ապահովել հարկ յեղած վերահսկողութիւնը Մոսկվայում և Լենինգրադում նոր ձեռնարկութիւնների կառուցումն արգելելու մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումների կատարման նկատմամբ, ինչպես նաև տարածել այդ վորոշումը Կիևի, Խարկովի, Դոնի-Ռոստովի, Գորկու, Սվերդլովսկի վրա, վորտեղ այսուհետև արգելել նոր ձեռնարկութիւնների կառուցումը:

բ) Յերկրի այնպիսի տնտեսական ոչախնեքում, ինչպիսիք են արևելյան շրջանները, Ուրալը և Պոլտոթյեն, յերրորդ հնգամյակում ստեղծել դուրլոր-ձեռնարկութիւններ՝ մեքենաշինութեան, նավթավերամշակման ու քիմիայի մի շարք ճյուղերի գծով, վորպեսզի վերացվեն պատահականութիւններն ունիկում-ձեռնարկութիւններից միջանի արդյունաբերական միջերջների մատակարարման գործում:

գ) Նախատեսել կապիտալ աշխատանքների ծավալի ավելի արագ աճում և նոր ձեռնարկութիւնների կառուցում ԽՍՀ Միութեան արևելյան ու հեռավոր-արևելյան շրջաններում: Ըստ ամենայնի շարունակել մետալուրգիական բազայի զարգացումն այդ շրջաններում, վորի համար դոմնային վառարանների ընդհանուր քանակից նրանց յերեք քառորդ մասը յերրորդ հնգամյակում կառուցել յերկրի արևելյան շրջաններում:

Ստեղծել տեքստիլ արդյունաբերութեան նոր խոշոր արտադրական բազա ԽՍՀՄ-ի արևելքում, միջին-ասիական բամբակի վերամշակումով: Հեռավոր Արևելքում նախատեսել ածխի հանույթի, ինչպես նաև ցեմենտի արտադրութեան զարգացման արագ տեմպեր, նրա պահանջը լիովին ապահովող չափերով:

դ) Ապահովել ազգային հանրապետութիւնների և մարզերի տնտեսական ու կուլտուրական հետագա վերելքը, յերրորդ հնգամյակում արտադրողական ուժերի տեղադրման հիմնական խնդիրներին համապատասխան:

4. Համագումարն անհրաժեշտ է համարում յերրորդ հնգամյակում ուղղորդութիւնը կենտրոնացնել հետևյալ կարևորագույն կառուցումների վրա.

ա) Մեքենաշինութեան ասպարիզում, արտադրութեան յերրորդ հնգամյակի համար սահմանված ծրագրին համապատաս-

խան, վորն զգալիորեն գերազանցում է արդյունաբերութեան վերելքի ընդհանուր տեմպը, լայնորեն ծավալել շինարարութիւնը և արագացնել նոր գործարանների, հատկապես դազգյահաշինական ու եներգետիկ սարքավորում արտադրող գործարանների գործի գեղը: Ավարտել ծանր դազգյահաշինութեան յերեք գործարանների, Գորկիում՝ Փրեդերային դազգյահաների գործարանի, Կիևում՝ ավտոմատ դազգյահաների գործարանի կառուցումը և ծավալել հղկող, ատամակտրիչ, յերկայնքով խալատող դազգյահաների, կարուսեյային, ռաստոչնի և ավտոմատ դազգյահաների միջին կարողութեան դազգյահաշինական մի շարք նոր գործարանների, ինչպես նաև զարբնոցային-մամլիչ սարքավորման գործարանների կառուցումը: Յերրորդ հնգամյակի ընթացքում կառուցել և գործարկման հանձնել տուրբինաշինութեան հինգ գործարան, այդ թվում տուրբինների գործարաններ՝ Սվերդլովսկի, Որսկի, Նովոսիբիրսկի, Նովոչերկասկի, Կալուգայի շրջաններում և նրանց համապատասխանող՝ կաթսայաշինութեան ու ոժանդակ եներգետիկ սարքավորման գործարաններ: Ավարտել Գորկու և Մոսկվայի ավտոգործարանների կառուցումը: Կառուցել փոքրալիտրաժ ավտոմոբիլների գործարան, ավտոհավաքման մի շարք նոր գործարաններ և ծավալել բեռնատար ավտոմոբիլների նոր գործարանների կառուցումը Սիբիրում ու Հեռավոր Արևելքում, ինչպես նաև ավտոարդյունաբերութեան մի շարք հարակից ձեռնարկութիւնների կառուցումը: Կառուցել մանվածքային մեքենաների գործարան՝ Կուրսկում և գործվածքային դազգյահաների գործարան՝ Արևմտյան Սիբիրում: Ավարտել Մարատովի՝ զնդակավոր առանցքակալների գործարանի կառուցումը և ծավալել յերկու նոր, զնդակավոր ու ոռլիկավոր առանցքակալների գործարանների կառուցումը: Կառուցել ծանր և միջակ քիմիական մեքենաշինութեան 1—2 գործարան:

բ) Ելեկտրիֆիկացիայի բնագավառում շինարարական ծրագրի կարևորագույն մասը Համագումարը համարում է կարողութիւնների աճումն ի հաշիվ նոր վոչ-մեծ ու միջակ ելեկտրոկայանների կառուցման, ինչպես նաև հիդրոէլեկտրոկայանների շինարարութեան ուժեղացումը: Ծավալել աշխարհում մեծագույն կառուցման—Կուրբիչևյան յերկու հիդրոկայանների շինարարութիւնը՝ ՅԱ միլիոն կիլովատ ընդհանուր կարողութեամբ, վորը միաժամանակ լուծում է չորային հողերի վոռոգման պրոբլեմը՝ Ջավոլթյեյում կայուն բերքի հասնելու համար և Վոլգայով ու

Կամայով նախագնացութեան գործը: Սկսել նաև Կալուզայի հիդրոէլեկտրոկայանի կառուցումը՝ Ոկա գետի վրա: Կառուցումն ավարտել և գործի դնել հետևյալ հիդրոկայանները՝ Ուզլիչի, Ռիբինսկի, Չիրչիկի, Քանաբուի, Սվիր—2, Նեվա—2, Սուխու—մի և այլն. սկսել նոր հիդրոկայանների կառուցումը՝ Վերին-Կամայի, Մինգեչաուրի և Ուստ-Կամենոգորսկի, ինչպես նաև լայնորեն ծավալել տեղական վոչ մեծ հիդրոկայանների շինարարութիւնը: Նախատեսել 91 ռայոնական ջերմային էլեկտրոկայանների կառուցումը, գործի դնելով դրանք—Վուրախովսկի, Նեպեստաևսկի, Կիրովյան կայանները՝ Լենինգրադում, Ֆրունզեյի կայանը՝ Մոսկվայում, Չելյարինսկի ջերմաէլեկտրոկայանը, Սուվախի, Կոմսոմոլսկի, Կիևի, Նիկոլաևսկի, Կիրովո-Չեպետսկի, Սիդրանի, Որսկի, Կարադանդայի, Կրասնոյարսկի, Խաբարովսկի, Կոլմասայսկի և այլն: Իվանովոյի շրջանում կառուցել տորֆով աշխատող նոր ջերմաէլեկտրոկայան՝ տեքստիլ արդյունաբերութեան համար:

Ելեկտրոշինարարութեան գծով կարողութիւնների ընդհանուր աճը յերրորդ հնգամյակում սահմանել 9 միլիոն կիլովատ, ապահովելով արդյունաբերական շրջաններում մշտական ենթագետիկ ռեզերվի ստեղծումը 10—15 տոկոսի կարողութեամբ:

զ) Ածխաքոյուղաբերութեան մեջ ծավալել հանքահորերի կառուցումն ինչպես քարածխի հանույթի, այնպես և գորշ ածխի հանույթի գծով: Յուրացնել ածխի հանույթի նոր շրջաններ, հատկապես Ուրալում, Բաշկիրիայում, Միջին Ասիայում, Արևելյան Սիբիրում, Անդրբայկալում, Խաբարովսկի և Պրիմորեյի յերկրամասերում, Ուկրաինայում, Կիբգիզական ու Տաջիկական ԽՍՀ-ներում: Կառուցել գլխավորապես միջին ու վոչ-մեծ կարողութեան հանքահորեր, ամեն կերպ կրճատելով և արագացնելով շինարարութեան ժամկետները: Հնգամյակի ընթացքում ընդամենը փորել քարածխի նոր շախտաներ 150 միլիոն տոնն ընդհանուր կարողութեամբ, գործարկման հանձնելով 130 միլիոն տոնն:

Նավթաքոյուղաբերութեան մեջ ապահովել նավթափերամշակման գործարանների նոր կարողութիւնների գործարկումը 15 միլիոն տոնն, և, բացի դրանից, կրեկինդ-սարքավորումներինը՝ 4,5 միլիոն տոնն կարողութեամբ: Յերրորդ հնգամյակում վճռական խնդիր համարել ևս մեկ հզոր նավթային բազայի ստեղծումը Վոլգայի և Ուրալի միջև գտնվող շրջանում, կառու-

ցելով այնտեղ նավթափերամշակման գործարաններ 6 միլիոն տոնն կարողութեամբ: Ապահովել յերկրաբանական վորոնման և հետախուզական աշխատանքների ծավալումը նավթի հանույթի նոր շրջաններում՝ Վոլգայի և Ուրալի միջև Սիբիրում, Հեռավոր-Արևելյան յերկրամասում, Ուկրաինայում և Միջին Ասիայում:

Տորֆային և քերքաքարային արդյունաբերութեան գծով ապահովել կապիտալ աշխատանքների անհրաժեշտ աճումը: Նախատեսել տորֆի արհեստական ջրադրկման գործարանների շինարարութիւնը, վորը հիմք է դնում տորֆի հանույթի մեջ սեզոնականութեան վերացմանը: Իրականացնել 2—3 կոքսային գործարանների կառուցումը, դրանցում նախատեսելով նաև քիմիական մթերքների մշակութիւնը:

զ) Սև մետալուրգիայի ասպարիզում ավարտել Մադնիտո-գորսկի կոմբինատի, Նովո-Տադիլսկի և Պետրովսկ-Չաբայկայսկի գործարանների, Ամուրստալտոյի, Չապորոժստալի, Ալոյստալի, Ժեստեստոյի, Ուրալի և Նիկոպոլսկի (ըստ կրճատ նախագծի) խողովակային գործարանների կառուցումը: Սկսել մետալուրգիական նոր գործարանների կառուցումը Հարավային Ուրալում (Խալիլովսկի և Բակալսկի հանքերում) և Արևելյան Սիբիրում, զոգված խողովակների գործարանը Ուրալում, խողովակապրոկատային մեկ գործարան՝ Սիբիրում և խողովակաձուլական գործարանը՝ կենտրոնում:

Լոմի և մետաղի մնացուկների ոգտադորման բազայի վրա ծավալել վերափոխման վոչ-մեծ գործարանների կառուցումը տեղական կարիքների համար՝ Միջին Ասիայի և Անդրկովկասի շրջաններում: Ընդամենը յերրորդ հնգամյակի ընթացքում կառուցել 20 նոր դոմնային վառարան և վերականգնել միայտի ածխով աշխատող յերեք դոմնային վառարանները՝ Ուրալում:

ե) Գունավոր մետալուրգիայի ասպարիզում ավարտել Մերձբայկալյան պղնձաձուլական կոմբինատի, Միջին-Ուրալյան և Բլյավինսկի կոմբինատների կառուցումը: Ծավալել Ջեզկադգանի և Ալմալիկի պղնձաձուլական կոմբինատների կառուցումը, ինչպես նաև կապարի ու ցինկի գործարաններինը՝ Ալթայում: Գործի դնել Ուրալի ալյումինի կոմբինատը, ինչպես նաև Կանդալախայի ու Ռիբինսկի ալյումինի գործարանները, Տիլվինսկի կավահողային գործարանը, Հարավային-Ուրալյան և Հյուսիսային Նիկելի կոմբինատները: Սկսել մի շարք նոր ձեռնարկութիւնների կառուցումը կապարի, ցինկի, անադի, վոլֆրամի և մոլիբ-

դենի արտադրութեան գծով: Կառուցել գունալուր պրոկատի ու բիմետալի, ինչպէս նաև ալյումինային ու մագնիումի ձուլվածքների վերամշակման գործարաններ:

դ) Քիմիական արդյունաբերութեան մեջ ծավալել պարարտանյութերի նոր կոմբինատների, սողայի, ծծմբաթթվի գործարանների կառուցումը գլխավորապէս տեղական հրաքարի և մետալուրգիական գործարանների գազերի ու ելեկտրոկայանների բազայի վրա, սինթետիկ կաուչուկի գործարանների ու շինի գործարանների կառուցումը, գործի դնելով սինթետիկ կաուչուկի՝ 13 գործարան, կորդային՝ 7 և շինի՝ 14 գործարան, վորոնք ապակենտրոնացված լինեն յերկրում: Կառուցել արհեստական հեղուկ վառելիքի 2 գործարան, բնական կաուչուկի վերամշակման 4—6 գործարան և սինթետիկ կաուչուկի ու սնդի արդյունաբերութեան մնացուկների վերամշակման մի քանի գործարան:

է) Դադարեցնել ցեմենտի ներմուծումը ԽՍՀՄ-ի յեվրոպական մասից՝ արևելյան շրջաններն ու Միջին Ասիայի հանրապետութիւնները, վորի համար կառուցել ցեմենտի միջին ու վոչ-մեծ կարողութեան նոր գործարաններ՝ ընդամենը 4,4 միլիոն տոնն արտադրական կարողութեամբ, այդ թվում Հեռավոր Արևելքի, Միբրի, Ղաղախական ԽՍՀ, Միջին Ասիայի հանրապետութիւնների շրջաններում և Ուրալում:

ը) Անտառային արդյունաբերութեան մեջ գործի դնել Սուրկամսի, Սյասսի, Մարիական, Կրասնոյարսկի, Կամայի և Կոնդոպոսի ցելյուլոզային ու ցելյուլոզ-թղթի կոմբինատները: Ծավալել ցելյուլոզային թղթի, ֆաների, անտառաքիմիական նոր ձեռնարկութիւնների և բնափայտի հիդրոլիզի գործարանների կառուցումը: Նախատեսել անտառային արդյունաբերութեան արագ զարգացումը ԽՍՀՄ-ի յեվրոպական մասի հյուսիսային ու հյուսիս-արևմտյան շրջաններում և Ուրալում, համապատասխանորեն փոփոխելով սղոցարանների տեղադրութիւնը և դադարեցնելով անտառանյութի փոխադրումը Միբրից՝ ԽՍՀՄ-ի յեվրոպական մասը:

թ) Թեքև արդյունաբերութեան մեջ գործի դնել բամբակե գործվածքեղենի նոր ֆաբրիկաներ Բարնաուլում, Նովոսիբիրսկում և Կուզբասում, ինչպէս նաև իրականացնել գործվածքային վոչ-մեծ ֆաբրիկաների կառուցումը տեքստիլ հին շրջաններում՝ մանելու և գործելու միջև դիսպրոպորցիան լիկվիդացիայի յենթարկելու համար, գործի դնել Տաշքենտի բամբակե գործվածքե-

ղենի կոմբինատի յերկրորդ հերթը, Լենինականի մանվածքային ֆաբրիկան, Կիևի և Սեմիպալատինսկի մահուղի կոմբինատները, ռետինե ներքանի գործարանը Կալինինում և արհեստական կաշիի գործարանը՝ Կազանում: Ծավալել տեքստիլ նոր ֆաբրիկաների կառուցումն Արևմտյան Միբրիում ու Ղազախական ԽՍՀ-ում, ինչպէս նաև տրեկտոսթային ու գուլպայի մի շարք նոր ֆաբրիկաների կառուցումը, վուշի վոչ-մեծ կոմբինատների, կաշվի գործարանների, կոշիկեղենի և մետաքսի ֆաբրիկաների կառուցումը:

ժա) Սճնդի արդյունաբերութեան մեջ լիովին ավարտել մսի կոմբինատների կառուցումն ու գործարկումը՝ Որսկում, Ենգելսում, Ուլան-Ուլէյում, Իրկուտսկում, Խարարովսկում, Սվերդլովսկում, Իվանովյում, Նալչիկում, Կույբիշևում, Դնեպրոպետրովսկում, Վորոշիլովգրադում, Աշխաբադում, Ստալինարադում. շաքարի գործարաններինը՝ Յելան-Կուլնոյում, Ժերգեկայում, Սովետսկում (Կուրսկի մարզ), Արմ-Աթայում, Նովո-Տրոիցկում: Կառուցել սպիրտի մի շարք նոր գործարաններ, յուղագործարաններ, խտացրած և չոր կաթի գործարաններ, հրուշակեղենի ու թեյի ֆաբրիկաներ: Ծավալել միջակ կարողութեան նոր մսի կոմբինատների, շաքարի գործարանների, հացի գործարանների և սառցարանների կառուցումը: Զինարդյունաբերութեան մեջ ավելացնել ծովային ձկնորսական նավատորմը և ավարտել ձկան կոմբինատների կառուցումը՝ Կոմսոմոլսկում, Խարարովսկում, Մոսկվայում և Մույնսկում. սառցարաններինը՝ Բալխաշում, Մանգիստաույում, Յախտարաիում, Սովգավանում, Պետրոպոլիսկում՝ Կամչատկայի վրա և 20 մանր սառցարաններինը՝ Հեռավոր-Արևելյան յերկրամասում. նավաշինարաններինը՝ Մուրմանսկում, Նիկոլայեվսկում՝ Ամուրի վրա և Պետրոպոլիսկում՝ Կամչատկայի վրա:

ժբ) Տեղական արդյունաբերութեան և արհեստագործական կոոպերացիայի ասպարիզում ծավալել մանր ձեռնարկութիւնների կառուցումը՝ տեղական հումքի և տեղական վառելիքի բազայի վրա:

ժգ) Քաղաքային շինարարութեան մեջ ադահովել աշխատանքների ծավալումը բնակարանային շինարարութեան և քաղաքների ու արդյունաբերական կենտրոնների բարեկարգման գծով: Կառուցել նոր ջրմուղներ 50 քաղաքներում, կոյուղիներ՝ 45 քա-

զաքներում, տրամվայ՝ 8 քաղաքներում: Չարդացնէլ քաղաքա-
յին տնտեսութեան գաղիֆիկացիան:

Ապահովել Մոսկվայի և Լենինգրադի հետադա գարգացումն
ու վերակառուցումը՝ ընդունված պլաններին համապատասխան:
Սվարտել մեարոյի յերրորդ հերթի կառուցումը Մոսկվայում:

Մինչև յերրորդ հնգամյակի վերջն ավարտել Խորհուրդների
Պալատի կառուցման հիմնական շինարարական աշխատանքները:

Ժբ) Գյուղատնտեսութեան բնագավառում իրականացնել 1500
ՄՏԿ-ների կառուցումը, ինչպես ի հաշիվ նոր, այնպես և ի հա-
շիվ հին ՄՏԿ-ների ապահովչորացման: Ապահովել նորոգման ան-
հրաժեշտ բազան՝ տրակտորների, կոմբայնների և գյուղատնտե-
սական այլ մեքենաների համար: Խորհրդատեսութեաններում ծա-
վալել անասնաբուժական կառուցումների շինարարութեանը, ա-
նասունների պահպանումը լիովին ապահովող չափերով:

Իրրիգացիայի և մեխորացիայի ասպարիզում ավարտել խոշոր
իրրիգացիայի և ցամաքեցուցիչ շինարարութեան գծով սկսված բո-
լոր աշխատանքները—Վախչ, Կոլխիդա, Նեվինոմիասկի ջրանցք,
Մուրգաբյան ոռոգիս: Ձեռնարկել վտուղման սխտամի կառուց-
մանը Չավոթյեյում: Ամրացնել արտադրական-տեխնիկական բա-
զան չորային շրջանների գյուղատնտեսութեան մեջ:

Ժե) Կառուցել հացահատիկային նոր ելեվատորների ու պա-
հեստների ցանց, ավելի քան 10 միլիոն տոնն միթերքների ընդհա-
նուր տարողութեամբ, ապահովելով արդեն յերրորդ հնգամյա-
կի առաջին կեսում հացահատիկը բուստերով պահելու լիակա-
տար վերացումը:

5. Արտադրական կարողութեանները կառուցման և գոր-
ծարկման ժամկետներն արադացնելու, ինչպես նաև նոր ձեռ-
նարկութեաններն ըստ յերկրի հիմնական տնտեսական շրջանների
ապահանջներին համապատասխան, ՀամԿ(Բ)Կ XVIII համագումար-
ը պահանջում է վճռական պայքար մղել գիգանտամիայի դեմ՝
շինարարութեան մեջ և լայնորեն անցնել միջակ և վոչ մեծ ձեռ-
նարկութեանների կառուցմանը ԽՍՀ Միութեան ժողովրդական
տնտեսութեան բոլոր ճյուղերում:

Համագումարն ուղարկութեան և հրավիրում շինարարութեան
արագբերաց մեքանիզմները պրակտիկայի մեջ վճռականորեն արմա-
տացնելու անհրաժեշտութեան վրա, վորի համար պահանջվում է
շինարարական ինդուստրիայի զարգացում, նրա վերածումը հետ
մնացողից՝ ժողովրդական տնտեսութեան առաջավոր ճյուղի,

կոմպլեքսային մեխանիզացիայի լայն զարգացումով և շինարա-
րական ստանդարտ դետալների ու կոնստրուկցիաների գործա-
դրումով, կառուցելով դրա համար անհրաժեշտ ձեռնարկութեան-
ներ:

Շինարարական աշխատանքների նշված ծրագիրը կատարելու
համար, յերրորդ հնգամյակում աշխատանքի արտադրողականու-
թյան աճումը շինարարութեան մեջ սահմանել 75 տոկոս և շինա-
րարական աշխատանքների արժեքի իջեցումը յերրորդ հնգամյա-
կի վերջում՝ 12 տոկոս՝ յերկրորդ հնգամյակի վերջի մակարդակի
համեմատութեամբ:

IV. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄՍԿԱՐԳԱԿԻ ՀԵՏԱԳԱ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԼԱՆՆ ԸՍՏ ՅԵՐՐՈՐԳԻ ՀՆԳԱՄՅԱԿԻ

Առաջին և յերկրորդ հնգամյակների կատարումը նշանակում
էր վոչ միայն ժողովրդական տնտեսութեան վիթխարի վերելք և
սոցիալիստական վերափոխում՝ Խորհրդային Միութեան պաշտ-
պանունակութեանն ամրապնդելու հետ միասին, այլև ԽՍՀՄ
ժողովուրդների նյութական-կուլտուրական մակարդակի մեծ վե-
րելք:

Յերրորդ հնգամյակը պետք է ապահովի անհրաժեշտ ապ-
րանքների, միթերքների, բնակարանի ասպարիզում, բնակչութեան
կենցաղային ու կուլտուրական սպասարկման գործում աշխատա-
վորների կարիքների ու պահանջների ել ավելի բարձր բավարա-
րումը: Յերրորդ հնգամյակի կատարումը, բացի դրանից, ապա-
հովում է մի նոր խոշորագույն քայլ դեպի առաջ՝ արտադրողա-
կան ուժերի հետադա գարգացման, ԽՍՀՄ-ում սոցիալիստական
հասարակութեան բարեկեցութեան և կուլտուրայի համար նյու-
թական հզոր բազա ստեղծելու գործում: Այժմ խոսքը գործա-
դրութեան վոչնչացման և դյուրում աղքատութեան վերացման
մասին չէ՝, —այդ խնդիրը մենք վաղուց արդեն լուծել ենք լի-
ովին և ընդմիջա: Այժմ խնդիրն այն է, վոր ստեղծենք աշխատա-
վորների այնպիսի բարեկեցութեան և կուլտուրականութեան
բարձրացում, վորոնք համապատասխանում են խորհրդային ժո-
ղովրդի աճած պահանջներին, վորոնք անհասանելի չեն կապի-
տալիզմի ամենահարուստ յերկրների համար և նշանակում են սո-
ցիալիզմի ուժերի իսկական ծաղկման, նոր, սոցիալիստական
կուլտուրայի ծաղկման սկիզբը:

Համկ(բ)Կ XVIII Համագումարը յերրորդ հնգամյակի համար, բանվորների և գյուղի աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման բնագավառում, սահմանում է հետևյալ առաջադրանքները.

1. ա) ԽՍՀՄ աշխատավորների սպառման ավելացումն ավելի քան մեկ ու կես անգամ, բանվորների, գյուղացիների և ծառայողների յեկամուտների աճմանը համապատասխան:

բ) Բանվորների և ծառայողների քվական կազմի ավելացումը յերրորդ հնգամյակի վերջում Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի գծով 17 տոկոսով՝ 1937 թվականի համեմատությամբ, միջին աշխատավարձը՝ 35 տոկոսով և աշխատավարձի ֆոնդը 62 տոկոսով:

գ) Քաղաքի և գյուղի աշխատավորների կուլտուր-կենցաղային սպասարկման վրա կատարվող պետական ծախսերի, այսինքն՝ սոցիալական ապահովագրության գծով կատարվող ծախսերի և լուսավորության, առողջապահության, բազմազավակ մայրերին տրվող նպաստի ու բանվորների և ծառայողների կուլտուր-կենցաղային սպասարկման վրա պետության ծախսերի բարձրացում մինչև 53 միլիարդ ռուբլի՝ 1937 թվականի 38 միլիարդ ռուբլու դիմաց, — աճում՝ ավելի քան 1,7 անգամ:

դ) Կարևորագույնների յեկամուտների զգալի ավելացում՝ կրտսնտեսություններում աշխատանքի արտադրողականության աճման, բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման և անասնապահության մթերատվության ավելացման հետևանքով:

յ) Ձեռնարկումների լայն շրջանի կիրառումը պատմական խնդրի իրականացման՝ ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակն ինժեներա-տեխնիկական աշխատանքի աշխատողների մակարդակին բարձրացնելու գործում լուրջ առաջխաղացման համար:

զ) Ընդհանուր միջնակարգ ուսուցման իրականացումը քաղաքում և ընդհանուր յոթնամյա միջնակարգ ուսուցման ավարտումը գյուղում ու բոլոր ազգային հանրապետություններում՝ ընդարձակելով յերեխաների ընդգրկումը 10-ամյա ուսուցմամբ, այն հաշվով, վոր քաղաքներում և բանվորական ավաններում տարրական և միջնակարգ դպրոցներում սովորողների թիվն ավելանա 8,6-ից հասնելով մինչև 12,4 միլիոնի, իսկ գյուղական վայրերում՝ 20,8-ից մինչև 27,7 միլիոնի:

ե) ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-ներում սովորողների կոնսինդենտը բարձրացնել մինչև 650 հազար մարդու, այն հաշվով, վոր մտտակա տարիներում գլխավոր ուշադրությունը դարձված լինի բարձրագույն կրթության վորակի բարձրացման վրա:

ը) Կինո-քատրոնների, ակումբների, գրադարանների, կուլտուրայի տների ու ընթերցարանների ցանցի ավելացումը՝ ստացիոնար և այլ հնչուն կինո-սարքավորումների լայն կազմակերպումով և 6 անգամ ավելացումով:

թ) Աշխատավորների առողջապահության գծով, հիվանդանոցային ոգնության բարելավման, սանիտարական-պրոֆիլակտիկ ձեռնարկումների ընդարձակման, ծննդկաններին ծննդաբերական ոգնություն ցույց տալու և մանկական հիվանդանոցների ընդարձակման, աշխատանքի պահպանության բարձրացման և բանվորական հանգստի ու ֆիզկուլտուրայի կազմակերպման գծով կատարվող աշխատանքի զգալի ուժեղացում, առողջապահության պետական ծախսերն ավելացնելով 1937 թվականի 10,8 միլիարդ ռուբլուց մինչև 16,5 միլիարդ ռուբլու՝ 1942 թվականին: Տեղերի թիվը մշտական մսուրներում և մանկապարտեղներում 1942 թվականին ավելացնել մինչև 4,2 միլիոնի՝ 1937 թվականի 1,8 միլիոնի դիմաց:

ժ) Բնակարանային շինարարության ուժեղացումը քաղաքներում և բանվորական ավաններում, յերրորդ հնգամյակում շահագործման հանձնելով 35 միլիոն քառակուսի մետր նոր բնակելի տարածություն:

2. Աշխատավորների կյանքի նյութական մակարդակի բարձրացման նպատակով յերրորդ հնգամյակում ապահովել խորհրդային կուլտուրական առևտրի ամեն կերպ զարգացումը և դրան համապատասխան սահմանել:

ա) Պետական-կոոպերատիվ ապրանքաշրջանառության ծավալի ավելացում 1942 թվականին մինչև 206 միլիարդ ռուբլու՝ 1937 թվականի 126 միլիարդ ռուբլու փոխարեն, ճաշարանների, ռեստորանների, կաֆեների և բուֆետների շրջանառությունն ավելացնելով յերկու անգամ:

բ) Պետական-կոոպերատիվ մանրածախ առևտրական ցանցի աճում 26 տոկոսով, բարելավելով ամբողջ առևտրական գործը (առոցարանային տնտեսություն, առևտրական բաղաների ու պահեստների կառուցում, ապրանքների փոխադրում ու ներմուծում), արագորեն աճող գյուղատնտեսական շրջաններում հատ-

կապես զարգացնելով կրպակների ու խանութների ցանցը՝ դյու-
դացիներին հասունացած կենցաղային, նորոգման ու շինարարա-
կան կարիքները սպասարկող ապրանքներով:

3. Համազումարը յերրորդ հնգամյակի ընթացքում ժողովրդ-
դակն յեկամուտի աճ սահմանում է 1,8 անգամ, և այդ կապակ-
ցութեամբ սահմանում է բնակչութեան ու պետութեան աճող յե-
կամուտներով ինչպես ժողովրդական սպառման կարիքներին, այն-
պես էլ ժողովրդական տնտեսութեան զարգացման, պաշտպանու-
նակութեան ամրապնդման և անհրաժեշտ պետական ռեզերվների
ստեղծման գործում պետական կարիքների ապահովման լիակա-
տար հնարավորութիւնը:

Համազումարը հաստատում է բյուջեային և վարկային աջ-
խատանքի բարելավման և խորհրդային ուղղու ամրապնդման
անհրաժեշտութիւնը՝ սոցիալիստական արտադրութեան աճման,
ապրանքաշրջանառութեան ուժեղ զարգացման և ժողովրդի կյան-
քի նյութական մակարդակի ընդհանուր վերելքի հիման վրա:

Յերրորդ հնգամյա պլանով առաջադրված խնդիրների ան-
պայման կատարման նպատակով, ՀամԿ(բ)Կ XVIII Համազումար-
ը բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական և պրոֆմիտ-
թենական կազմակերպութիւններից պահանջում է.

ա) Տնտեսական ղեկավարութեան կենդանի ուղերատիվութիւն
և գործունակութիւն, ղեկավարների աշխատանքի կենտրոնացում,
կադրերի ճիշտ ընտրութիւն, կուսակցութեան և կառավարու-
թեան կողմից սահմանված առաջադրանքների կատարման ամե-
նորյա փաստացի ստուգման վրա.

բ) բանվորների, վարպետների և ինժեներ-տեխնիկական
աշխատողների աշխատավարձի ճիշտ կազմակերպում, աշխատան-
քի արտադրողականութեան աճման հարկ յեղած նյութական խրա-
խուսումով.

գ) սոցիալիստական մրցութեան և ստախանովյան շարժման
ծավալում, ձեռնարկութիւններում, հիմնարկներում և կոլտնտե-
սութիւններում ապահովելով աշխատանքային ամուր կարգապա-
հութիւն և բոլոր աշխատավորների աշխատանքի բարձր արտա-
դրողականութիւն:

Յերրորդ հնգամյակի խնդիրներն իրականացնելու համար
անհրաժեշտ է լիովին լիկվիդացիայի յենթարկել Փաշիգի և
ոտարերկրյա կապիտալի լրտեսական-տրոցկիստական-բուխարի-

նական գործակալներին հակահեղափոխական վնասարարութեան
հետեւանքները, բարձրացնել բոլշևիկյան զգոնութիւնը կոմունիզ-
մի կառուցման ամբողջ աշխատանքում և միշտ հիշել կուսակցու-
թեան ցուցումն այն մասին, վոր քանի դոյութիւն ունի արտա-
քին կապիտալիստական շրջապատումը, ոտարերկրյա պետու-
թիւնների հետախուզութիւնները մեզ մոտ կուզարկեն վնասա-
բարներ, դիվերսանտներ, լրտեսներ ու մարդասպաններ, վոր-
պեսպի փշացնեն, վնաս հասցնեն ու թուլացնեն մեր յերկիրը,
վորպեսպի խանդարեն կոմունիզմի աճմանը ԽՍՀՄ-ում:

Յերրորդ հնգամյա պլանի մեծ խնդիրների իրականացումն
այնքան սերտորեն կապված է բանվորների, դյուդացիների և
խորհրդային ինտելիգենցիայի հարազատ շահերի հետ, վոր նրա
կատարման ապահովելը կախված է, ամենից առաջ, մեզանից՝
կոմունիստներից և անկուսակցական բոլշևիկ-ղեկավարներից,
և մանավանդ աշխատանքը կազմակերպելու ու աշխատավորների
կոմունիստական դաստիարակութիւնը բարձրացնելու մեր հմուտ-
թիւնից: Մեզ բոլորիցս, ղեկավարներից և շարքային բանվորնե-
րից, ծառայողներից և կոլտնտեսականներից պահանջվում է,
առաջին հերթին, գիտակից վերաբերմունք դեպի իրենց պարտա-
կանութիւնները, ազնիվ աշխատանք և ողնութիւն՝ հետ մնա-
ցողներին, վորպեսպի յերրորդ հնգամյա պլանը հաղթանակի,
վորպեսպի Խորհրդային Միութիւնը մի նոր վիթխարի քայլ կա-
տարի կոմունիզմի լիակատար հաղթանակի ուղիով: Արդի պայ-
մաններում, յերբ ԽՍՀՄ-ում անբաժանելիորեն տիրապետում
են տնտեսութեան սոցիալիստական ձևերը, սոցիալիստական սե-
փականութիւնը, աշխատանքի սոցիալիստական կազմակերպու-
մը, յերբ մեր գործի հաջողութեան համար վճռական նշանակու-
թիւն է ստանում կոմունիստական գիտակցականութիւնը հո-
գուտ մեր պետութեան, ժողովրդի և բոլոր աշխատավորների կա-
տարվող աշխատանքում, — վիթխարի չափով բարձրանում է խոր-
հրդային ինտելիգենցիայի դերը, ինտելիգենցիայի, վորը կա-
րողանում է բոլշևիկներն աշխատել, բոլշևիկներն պայքարել հա-
նուն աշխատավորների կուլտուրականութեան և կոմունիստական
գիտակցութեան բարձրացման: Այժմ, ԽՍՀՄ-ում սոցիալիստա-
կան հասարակութեան քաղաքական ու տնտեսական դիրքերի
վերջնական ամրապնդումից հետո, գործը վճռում են արտադրու-
թեան տեխնիկական յուրացրած կադրերը, գործը վճռում են խոր-
հրդային կուլտուրական ուժերը, վորոնք գլխավորում են աշ-

խատաւոր մասսաներին՝ կոմունիզմի լիակատար հաղթանակի համար մղած նրանց մեծ պայքարում :

Կապիտալիստական յերկրներում հասարակութեանն ավելի ու ավելի խոր կերպով և մաշում համաշխարհային տնտեսական նոր ճգնաժամը, վերը փողոց և շարտում նոր միլիոնավոր դործագուրկներ, ուժեղացնում և աղքատութիւնն ու հուսահատութիւնը աշխատավորութեան՝ կապիտալին ստրուկ մասսայի մեջ : Կապիտալիզմի բանակում տոն են տալիս Ֆաշիստական յերկրները՝ իրենց ներքին արյունոտ տեռորով ու արտաքին իմպերիալիստական ագրեսիայով, վորն արդեն հասցրել և յերկրորդ իմպերիալիստական պատերազմին՝ Յեւրոպայի ու Ասիայի մի շարք յերկրները մասնակցութեամբ և սպառնում և տարածվել ավելի հեռուն : Այս ամենը կապիտալիզմի ընդհանուր, անբուժելի ճգնաժամի ուժեղացման, կապիտալիզմի պարագլխային նեխման, նրա կրայի մոտեցման անվիճելի հատկանիշներն են : Ուստի, առավել պատասխանատու յեն մեր պարտականութիւնները, առաջին սոցիալիստական հասարակակարգը կառուցողները պարտականութիւնները, հասարակակարգ, վորն արդեն կարողացել և քաղաքականապես ու տնտեսապես վերջնականապես կանգնել իր սեփական վտարների վրա, լի յե ուժով ու հաւատով դեպի իր հաղթանակը, կայտառութիւն և իր մոտալուտ ազատագրման նկատմամբ հավատ և առաջացնում բոլոր յերկրների աշխատավորների մեջ : Յերրորդ հնգամյա պլանի կատարումը կլինի կոմունիզմի ամենահաղթ ուժի լավագույն վկայութիւնը կապիտալիզմի դեմ նրա պատմական մրցութեան մեջ :

ՀամԿ(բ)Կ XVIII Համագումարը բոլոր բուլճարիկներին և կոմունիզմի դործին նախընտրած բոլոր կառուցողներին պահանջում և անել ամեն ինչ, վորպեսզի բանվորներին, կոլտնտեսականներին, ինտելիգենցիային ե՛լ ավելի համախմբենք Ղենինի—Ստալինի կուսակցութեան մեծ դրոշի տակ, պայքարելու համար հանուն յերրորդ հնգամյա պլանի հաղթանակի :

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

ՀամԿ(բ)Կ XVIII Համագումարում
ընկ. Ա. Ա. Ժդանովի գեկուցման քեզիսները,
վարուն հիմնականում հավանութուն են գտել
ՀամԿ(բ)Կ կենտկոմի Գաղբյուրոյի կողմից

1. ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակը ապահովեց սոցիալիստական եկոնոմիկայի տիրապետութիւնը: ԽՍՀՄ-ի եկոնոմիկայի բնագավառում կատարված արժատական փոփոխութիւններին համապատասխան փոխվեց ԽՍՀՄ-ի բնակչութեան դասակարգային կազմը: Սոցիալիստական շինարարութեան տարիներին ընթացքում լիկվիդացիայի յենթարկվեցին բոլոր շահագործող տարրերը՝ կապիտալիստները, վաճառականները, կուլակները, սպեկուլանտները: ԽՍՀՄ-ի աշխատավորները՝ բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան խորը կերպով փոխվեցին սոցիալիստական շինարարութեան տարիներին ընթացքում:

Արժատապես փոխվեց բանվոր դասակարգը, վորը վերածվել է միանգամայն նոր դասակարգի՝ շահագործումից ազատված, տնտեսութեան կապիտալիստական սիստեմը վոչնչացրած և արտադրութեան միջոցների սոցիալիստական սեփականութիւն հաստատած:

Արժատապես փոխվեց գյուղացիութիւնը, վորը վերածվել է միանգամայն նոր գյուղացիութեան՝ ամեն մի շահագործումից ազատված, իր ճնշող մեծամասնութեամբ կոլտնտեսային գյուղացիութիւն հանդիսացող, վորն իր աշխատանքը և իր ունեցվածքը խարսխում է վոչ թէ մասնավոր տնտեսութեան, անհատական աշխատանքի ու հետամնաց տեխնիկայի վրա, այլ կոլեկտիվ սեփականութեան վրա, կոլեկտիվ աշխատանքի և ժամանակակից տեխնիկայի վրա:

Փոխվեց ինտելիգենցիան, վորն իր մասսայով դարձել է միանգամայն նոր ինտելիգենցիա՝ իր բոլոր արժատներով բանվոր դասակարգի և գյուղացիութեան հետ կապված: Խորհրդային ինտելիգենցիան—այդ յերեկվա բանվորներն ու գյուղացիները և բանվորների ու գյուղացիների զավակներն են, վորոնք առաջ են քաշվել հրամանատարական սրտերի: Խորհրդային ինտելիգենցիան ծառայում է վոչ թէ կապիտալիզմին, ինչպէս հին ինտելիգենցիան, այլ սոցիալիզմին, և հանդիսանում է սոցիալիստական հասարակութեան իրավահավասար անդամը:

Այսպիսով, դասակարգային սահմանադժերը ԽՍՀՄ-ի աշխատավորների միջև ջնջվում են, վերանում և ջնջվում են անտեսական ու քաղաքական հակասությունները բանվորների, գյուղացիների ու ինտելիգենցիայի միջև: Ստեղծվել է խորհրդային հասարակության բարոյական-քաղաքական միասնության հիմքը: Խորհրդային ժողովրդի այդ բարոյական-քաղաքական միասնությունն իր փայլուն հաստատումը գտավ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ կոմունիստների ու անկուսակցականների բրդի ստեղծման մեջ և այդ բրդի լիակատար հաղթանակի մեջ: Կուսակցության շուրջն աճել են վոչ-կուսակցական բոլշևիկների, առաջավոր բանվորների, գյուղացիների ու ինտելիգենտների, կուսակցության դործի համար պայքարող ակտիվ ու գիտակից մարտիկների, կուսակցության գիծը մասսաների մեջ անցկացնողների բաղմամբով կազմեր:

Այս նոր իրադրություն մեջ հասունացել է կուսակցության մեջ նոր անդամների ընդունելություն՝ կանոնադրությամբ նախատեսված պայմանների փոփոխման անհրաժեշտությունը: Կուսակցության կանոնադրության համաձայն ներկայումս դործող կարգը, ըստ վորի կուսակցության մեջ ընդունելությունը կատարվում էր չորս զանազան կատեգորիաներով, նայած կուսակցության մեջ ընդունվողի սոցիալական դրությունը, բացահայտորեն չի համապատասխանում ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթանակի հետևանքով խորհրդային հասարակության փոփոխված դասակարգային ստրուկտուրային: Կուսակցության մեջ ընդունելություն ժամանակ զանազան կատեգորիաներ և զանազան թեկնածուական ստաթ սահմանելու կարիքը վերանում է: Այդ կապակցությամբ, կուսակցության մեջ բոլոր ընդունվողների համար պետք է սահմանվեն ընդունելության միասնական պայմաններ և թեկնածուական միատեսակ ստաթ, անկախ այն բանից՝ նրանք պատկանում են բանվոր դասակարգին, գյուղացիությանը, թե ինտելիգենցիային:

2. Անհրաժեշտ է կուսակցության անդամների և նրանց պարտականությունների մասին կանոնադրական դրույթը լրացնել կուսակցության անդամների իրավունքների մասին դրույթով, վորոնք համարվում են ինքնըստինքյան հասկանալի, բայց կանոնադրության մեջ չեն նշված: Կուսակցության կանոնադրության այսպիսի լրացումը համապատասխանում է կուսակցության անդամների ակտիվության աճմանը և բացառիկ նշանակություն

ունի կուսակցության դործի համար նրանց պատասխանատվությունը բարձրացնելու, կուսակցության անդամներին բյուրոկրատիզմի արտահայտություններից պաշտպանելու համար: Կուսակցության կանոնադրության 57-րդ պարագրաֆն ասում է, վոր՝ «Կուսակցական քաղաքականության հարցերի ազատ և դործարար քննարկումն առանձին կազմակերպություններում կամ ամբողջ կուսակցության մեջ կուսակցության յուրաքանչյուր անդամի անկապտելի իրավունքն է, վորը բղխում է Կերկուսակցական դեմոկրատիայից»:

Բացի այդ իրավունքից, կանոնադրության մեջ պետք է հիշատակված լինեն կուսակցության անդամների հետևյալ իրավունքները.

ա) կուսակցության անդամների իրավունքը՝ կուսակցական ժողովներում քննադատելու կուսակցության ամեն մի աշխատողի.

բ) կուսակցության անդամների իրավունքը՝ ընտրելու և ընտրվելու կուսակցական որդաններում.

գ) կուսակցության անդամների իրավունքը՝ անձնական մասնակցություն պահանջելու այն բոլոր դեպքերում, յերբ վորոշում է կայացվում նրանց դործունեության կամ վարքի մասին.

դ) կուսակցության անդամների իրավունքը՝ ամեն մի հարցով ու հայտարարությամբ դիմելու կուսակցական ամեն մի ինտանցիա, ընդհուպ մինչև ՀամԿ(բ)Կ Կենտկոմ:

3. ՀամԿ(բ)Կ կանոնադրությամբ նախատեսված են կուսակցության գտումներ, վորոնք անց են կացվում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պարբերաբար կայացվող վորոշումներով: Փորձը ցույց է տվել, վոր այսուհետև անհրաժեշտ է հրաժարվել կուսակցության մասսայական գտումներից, հետևյալ նկատուումներով.

ա) մասսայական գտումների մեթոդը, վորը մտցվել է նեպի սկզբում, կապիտալիստական տարրերի աշխուժացման ժամանակաշրջանում, վորպեսզի կուսակցությունը պաշտպանվեր նեպի կապակցությամբ իր շարքերը քայքայված մարդկանց սողոսկելուց, կորցրել է հողը ներկայիս իրադրության համար, յերբ կապիտալիստական տարրերը լիկվիդացիայի յեն յենթարկված: Բացի դրանից, պրակտիկայում, ինչպես ցույց է տվել վորձը, մասսայական գտումների մեթոդը բացասում է դեպի կուսակցության անդամները միակ ճիշտ անհատական մոտեցման հնարավորությունը, փոխարինելով այն դեպի կուսակցության անդամները «մեկ չափանիշով» հախուռն ստանդարտ մոտեցմամբ: Այդ կա-

պակցութեամբ, մասսայական գտումները ժամանակ տեղի եյին ունենում բաղմամբով չհիմնադրուած վտարումներ կուսակցութեանից, իսկ կուսակցութեան մեջ սողոսկած թշնամական տարրերը գտումներն ոգտադործում եյին ազնիւ աշխատողներին հալածելու և ծեծելու համար .

բ) մասսայական գտումները մեթոդը հնարավորութեան չի տալիս լրիւ չափով իրականացնելու կուսակցական դիրքորոշումը դեպի կուսակցութեան անդամները, դեպի աշխատողներն ուչադիր վերաբերմունքի մասին և պրակտիկայում հաճախ տանում է դեպի կուսակցութեան անդամները իրավունքների վտանահարում .

գ) կուսակցութեան մեջ սողոսկած թշնամական տարրերը վերաբերմամբ, վորոնք իրենց թշնամական դեմքը քողարկում են յերեկերեսանութեան և կուսակցութեանը խարելու միջոցներով, մասսայական գտումները մեթոդը դուրս յեկալ քիչ ներգործուն և նպատակին չհասնող .

դ) մասսայական գտումները մեթոդն իր սուր ծայրով դուրս յեկալ ուղղված գլխավորապես կուսակցութեան, այսպես կոչված, պասսիւ անդամների դեմ և հասցնում էր կուսակցութեանից նրա ազնիւ ու բարեխիղճ անդամներին վտարելուն, իբր թէ նրանց պասսիւութեան մոտիվներով .

Այս կապակցութեամբ կուսակցութեան պարբերաբար տեղի ունեցող մասսայական գտումներն անհրաժեշտ է վերացնել, սահմանելով, վոր կուսակցութեանը կարող է սովորական կարգով իր շարքերը մաքրել այնպիսի անձերից, վորոնք խախտում են կուսակցութեան ծրագիրը, կանոնադրութեանը, կարգապահութեանը :

4. կուսակցութեանը Կենտկոմի 1937 թվի փետրվար-Մարտյան Պլենումում և Կենտկոմի 1938 թվի Հունվարյան Պլենումում դատապարտեց դեպի կուսակցութեան անդամները բախտի, կուսակցութեան անդամներին կուսակցութեանից վտարելու և վտարված անդամներին կուսակցութեան մեջ վերականգնելու հարցը ձևական ու անհոգի բյուրոկրատական վերաբերմունքի պրակտիկան: Այդ պրակտիկան, ինչպես հայտնի յե, լայնորեն ոգտադործվեց կուսակցութեան մեջ սողոսկած կարյերիստական տարրերի կողմից, վորոնք աշխատում եյին աչքի ընկնել և առաջ քաշվել կուսակցութեանից յեղած վտարումների միջոցով, ինչպես նաև կուսակցութեան ներսում դիմակավորված թշնամիների կողմից, վորոնք ճգնում եյին սեպրեսիայի միջոցների լայն կի-

տառումով կոտորել կուսակցութեան ազնիւ անդամներին և ավերել կասկածանք սերմանել կուսակցական շարքերում :

Կենտկոմի 1938 թվի Հունվարյան Պլենումը մի շարք միջոցառումներ ընդունեց, վորոնք ապահովում են կուսակցութեանից հախուռն վտարումների պրակտիկայի վերացումը, իրոք դիֆերենցիացիայի յենթարկված մոտեցման սահմանումը կուսակցութեանից վտարելու կամ վտարված անդամներին կուսակցութեան մեջ վերականգնելու հարցերի լուծման ժամանակ :

Գրան համապատասխան, անհրաժեշտ և կանոնադրութեանը քրացնել մի շարք դրույթներով, վորոնք պետք է՝

ա) ապահովեն ուչադիր մոտեցումը և կուսակցութեան անդամին ներկայացված մեղադրանքների հիմնավորութեան ուչի ուչով քննումը .

բ) կուսակցութեան անդամների իրավունքները պաշտպանեն ամեն տեսակ կամայականութեանից .

գ) պրակտիկայից վերացնել կուսակցութեանից վտարում կիրառելը, վորը կուսակցական պատժի բարձրագույն չափն է հանգիստանում, կուսակցութեան այն անդամների վերաբերմամբ, վորոնք կատարել են չնչին դանցանքներ :

5. Անհրաժեշտ է վերացնել կանոնադրութեան պահանջը կուսակցութեան մեջ ընդունվող թեկնածուների նկատմամբ, վորի համաձայն, վորպես նրանց ընդունելութեան պայման, քրվում թ, կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութեանն ընդունելուց և կանոնադրութեամբ սահմանված թեկնածուական ստաժն անցնելուց բացի, նաև ծրագրի յուրացումը :

Ընկ. Ստալինը Կենտկոմի 1937 թվի փետրվար-Մարտյան Պլենումում աված գեկուցման մեջ մատնանչեց .

«կուսակցութեան ծրագիրը յուրացնելու համար պետք է իսկական մարքսիստ լինել, ստուգված ու տեսականորեն պատրաստված մարքսիստ: Յես չգիտեմ՝ մեզ մոտ շատ կղտնվեն արդյոք կուսակցութեան այնպիսի անդամներ, վորոնք արդեն յուրացրել են մեր ծրագիրը, դարձել են իսկական մարքսիստներ, տեսականորեն պատրաստված և ստուգված: Յեթե առաջ գնալու լինենք այդ ուղիով, ապա մենք ստիպված կլինեյինք կուսակցութեան մեջ թողնել միայն ինտելիգենտներին և առհասարակ գիտնական մարդկանց: Ո՞ւմ է պետք այդպիսի կուսակցութեանը: Մենք ունենք կուսակցութեան անդամութեան մասին ստուգված և

բոլոր փորձություններին դիմացած լենինյան Փորձուլա: Այդ Փորձուլայի համաձայն՝ կուսակցության անդամ համարվում է նա, ով ընդունում է կուսակցության ծրագրերը, մոծում է անդամավճար և աշխատում է նրա կազմակերպություններից մեկում: Ուշադրություն դարձրե՞ք լենինյան Փորձուլայի մեջ խոսվում է վոչ թե ծրագրի յուրացման մասին, այլ ծրագրերն ընդունելու մասին: Սրանք յերկու միանգամայն տարբեր բաներ են: Ապացուցելու կարիք էլ չկա, վոր այստեղ իրավացի յե լենինը, և վոչ թե մեր այն կուսակցական ընկերները, վորոնք դատարկ տեղը շաղակրատում են ծրագրի յուրացման մասին: Յեվ այդ հասկանալի յե: Յեթե կուսակցությունը յեկներ այն բանից, վոր կուսակցության անդամ կարող են լինել միայն այնպիսի ընկերներ, վորոնք արդեն յուրացրել են ծրագիրը և դարձել են տեսականորեն պատրաստված մարքսիստներ, ապա նա կուսակցության մեջ չե՞ր ստեղծի հաղարավոր կուսակցական խմբակներ, հարյուրավոր կուսակցական դըրրոցներ, վորտեղ կուսակցության անդամներին մարքսիզմ են սովորեցնում և նրանց ոգնում են յուրացնելու մեր ծրագիրը:

Միանգամայն պարզ է, վոր յեթե կուսակցությունն այդպիսի դըրրոցներ ու խմբակներ է կազմակերպում կուսակցության անդամների մեջ, ապա այդ այն պատճառով է, վոր նա գիտե, վոր կուսակցության անդամները դեռ չեն կարողացել յուրացնել կուսակցության ծրագիրը, դեռ չեն կարողացել տեսականորեն պատրաստված մարքսիստներ դառնալ»:

Այս մոտիվներով, անհրաժեշտ է վերացնել կանոնադրության հիշյալ պահանջը:

6. Կուսակցության նոր խնդիրները, վորոնք առաջ են յեկել յերկրի քաղաքական կյանքում կատարված շրջադարձի, ԽՍՀ Միության նոր Մահմանադրությունն ընդունելու կապակցությամբ, կուսակցությունից պահանջեցին կուսակցական աշխատանքի պրակտիկայի համապատասխան վերակառուցում՝ կուսակցության կանոնադրությամբ առաջադրվող ներկուսակցական դեմոկրատիզմի սկզբունքներն անվերապահորեն ու լիովին կենսագործելու հիման վրա: Այդ նպատակով կուսակցությունը լիվիվացիայի յենթարկեց դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքների խախտումը, վոր տեղի ուներ կուսակցական աշխատանքի պրակտիկա-

յում, և, կուսակցության կանոնադրությանը համապատասխան, վերականգնեց կուսակցական կազմակերպությունների ղեկավար օրգանների ընտրականությունը:

Կուսակցությունը կիրառեց նաև մի շարք լրացուցիչ միջոցներ, վորոնք ապահովում են հետևողական դեմոկրատական պրակտիկայի կիրառումը, այն է՝ կոոպրացիայի պրակտիկայի վերացում, կուսակցական օրգանների ընտրությունների ժամանակ ցուցակով քվեարկելու արդելում, անցում ըստ առանձին թեկնածուների քվեարկության, կուսակցության բոլոր անդամների համար թեկնածուներին բացարկելու և վերջիններիս ջննադատելու անսահմանափակ իրավունքի ապահովում, կուսակցական օրգանների ընտրությունների ժամանակ թեկնածուների վիակ (գաղտնի) քվեարկության սահմանում, պարբերաբար քաղաքային կուսակցական ակտիվի, իսկ մեծ քաղաքներում՝ նաև ռայոնական ակտիվի ժողովների հրավիրման պարտադրության սահմանում:

Կանոնադրությունը պետք է արտացոլի կուսակցության այս նոր միջոցառումները, վորոնք ստուգված են պրակտիկայով, վորոնք ապահովել են ջննադատության և ինքնաքննադատության հետագա զարգացումը, կուսակցական մասսայի առջև կուսակցական օրգանների պատասխանատվության բարձրացումը, կուսակցական մասսայի ակտիվության աճումը և դրանով իսկ նպատակ են կուսակցության զինմանը՝ քաղաքական ղեկավարման նոր խնդիրների հաջող լուծման համար:

7. Կուսակցության կանոնադրության համաձայն, կուսակցական վճիռներն ու վորոշումներն իրադրոծելու (և խորհրդային անտեսական օրգաններում ու կուսակցական ստորին կազմակերպություններում դրանց կատարումն ստուգելու) նպատակով պրակտիկ աշխատանք կատարելու համար՝ մարզկոմներում, յեթեկըրկոմներում, ազգային կոմկուսակցությունների Կենտկոմներում և ՀամԿ(բ)Կ Կենտկոմում պետք է զոյություն ունենան ամբողջական արտադրական-ճյուղային բաժիններ, ըստիորում «յուրաքանչյուր արտադրական-ճյուղային բաժնում կենտրոնացվում է տվյալ ճյուղի ամբողջ աշխատանքը՝ կազմակերպական-կուսակցական աշխատանք, կադրերի բաշխում ու պատրաստում, ադիտ-մասսայական աշխատանք, արտադրական պրոպագանդա, հսկողություն համապատասխան խորհրդային-անտեսական օր-

զանների և կուսակցական կազմակերպութիւնները կողմից կուսակցական վերոշումները կատարելու վրա»:

Պրակտիկան ցույց է տվել, սակայն, վոր կուսակցական ապարատի այդպիսի կազմակերպումն անբավարար գտնվեց:

Կուսակցութեան կենտրոնական կազմակերպական խնդիրն անցած ժամանակաշրջանում և ներկայումս յեղել է ու մնում է մարդկանց ճիշտ ընտրութեան և կատարումն ստուգելու խնդիրը: Այդ հարցին բացառիկ նշանակութիւն էր տալիս Լենինը, կուսակցութեան 11-րդ համագումարում մատնանշելով.

«Մենք յեկանք այն յեզրակացութեան, վոր դրութեան մեխը—մարդկանց մեջ է, մարդկանց ընտրութեան մեջ է... Ընտրեցեք հարկավոր մարդկանց ու ստուգեցեք պրակտիկ կատարումը,—և ժողովուրդն այդ կգնահատի»:

Կուսակցութեան XVII համագումարում տված իր գեկուցման մեջ ընկ. Ստալինն ամբողջ ուժով ընդգծեց մարդկանց ճիշտ ընտրութեան և կատարումն ստուգելու նշանակութիւնը, ասելով.

«Հաղթութիւնը յերբեք ինքը չի գալիս, այն սովորաբար ուժով են բերում: Կուսակցութեան գլխավոր գծի ոգտին ընդունված լավ բանաձևերն ու ղեկարացիաները գործի միմիայն սկիզբն են, վորովհետև նրանք նշանակում են միմիայն հաղթելու ցանկութիւն, և վոչ բուն հաղթութիւնը: Ճիշտ գիծը տրվելուց հետո, հարցի ճիշտ լուծումը տրվելուց հետո—գործի հաջողութիւնը կախված է կազմակերպական աշխատանքից, կուսակցութեան գիծը կենսագործելու համար մղվող պայքարը կազմակերպելուց, մարդկանց ճիշտ ընտրութիւնից, ղեկավար մարմինների վերոշումների կատարումն ստուգելուց: Առանց դրան՝ կուսակցութեան ճիշտ գիծն ու ճիշտ վերոշումները լուրջ վնաս կրելու ռիսկի յեն յենթարկվում: Դեռ ավելին. քաղաքական ճիշտ գիծը տրվելուց հետո՝ կազմակերպական աշխատանքն է վճռում ամեն ինչ, այդ թվում նաև հենց իր՝ քաղաքական գծի ճակատագիրը,—նրա իրականացումը կամ վիժումը»:

Փորձը ցույց է տվել, վոր մեր կազմակերպական աշխատանքի թուլութիւնները՝ մարդկանց ընտրութեան և կատարումն ստուգելու ուղղութեամբ, մինչև այժմ վերացված չեն: Կազմակերպութեան գործի ցրումն արտադրական-ճյուղային բաժինների միջև հասցրեց կազմակերպական աշխատանքի թափի իջեց-

ման, դժվարացրեց աշխատողների անհրաժեշտ տեղաշարժը մեկ ճյուղից մյուսը, մարդկանց առաջընթացը, նրանց նպատակահամար ոգտագործումն այն աշխատամասերում, վորոնք տվյալ մոմենտին հատուկ կարևորութիւն են ներկայացնում կուսակցութեան համար: Կազմակերպութեան գործի ցրումը կուսակցական ապարատի զանազան արտադրական-ճյուղային բաժիններով մեկ՝ ուղղակի արդեսակ է դարձել կազմակերպութեան ու բաշխման խնդրի հաջող լուծման համար: Այդ խնդիրը պահանջում է կազմակերպութեան գծով կատարվող ամբողջ աշխատանքին ուղղութիւն տալ միասնական կենտրոնից, այդ աշխատանքը միասնական ապարատում կենտրոնացնելու միջոցով, վորտեղ պետք է կենտրոնացված լինեն կազմակերպութեան փորձը, կազմակերպութեան ուսումնասիրման գործը, նրանց դասավորման փորձը:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, հաշվի առնելով նման դրութիւնը, ձեռք առավ մի շարք միջոցներ, կազմակերպութեան գործը կենտրոնացնելով կուսակցական ղեկավար որդանների բաժնում (Կենտկոմի Կուսակցական ղեկավար որդանների բաժին): Սակայն նկատի ունենալով կազմակերպութեան պատրաստման ու ընտրութեան գործի առաջնակարգ կարևորութիւնը և այդ աշխատանքի մեծ ծավալը, պետք է վոր վերակառուցվեր Կուսակցական ղեկավար որդանների բաժինը, աշխատանքի բոլոր ճյուղերում կազմակերպութեան գծով կատարվող աշխատանքն առանձնացնելով Կազմակերպական ղեկավարման հարցերը՝ հատուկ կազմակերպական-հրահանգչական բաժնում:

8. Անբավարար գտնվեց նաև կուսակցական գիրեկտիվների կատարման ստուգումը զանազան արտադրական-ճյուղային բաժինների միջև ցրելու պրակտիկան: Այդ աշխատանքը նույնպես անհրաժեշտ է կենտրոնացնել մեկ տեղում, դրան համապատասխան փոփոխելով ԿՎՀ-ի գործունեութեան ընդլայնումը: ԿՎՀ-ի կենտրոնական խնդիրը պետք է դառնա ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վերոշումների կատարման վերահսկողութիւնն ուժեղացնելու և տեղական կազմակերպութիւնների աշխատանքի սխտեմատիկ ստուգում կազմակերպելու խնդիրը: Անհրաժեշտ է սահմանել, վոր ԿՎՀ-ն գործում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից: Այդ կապակցութեամբ, վերանում է ԿՎՀ-ն անմիջականորեն կուսակցութեան համագումարում ընտրելու անհրաժեշտութիւնը: Կուսակցական վերահսկողութեան Հանձնաժողովը պետք է ընտրվի ՀամԿ(բ)Կ

Կենսաբանական կոմիտեի Գլենոմի կողմից և գործիչ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարութեամբ ու ղերեկտիվներով:

9. Կուսակցական կադրերի տեսական ու քաղաքական հետազոտությունը լիկվիդացիայի յենթարկելու խնդիրը, կուսակցություն անդամներին մարքս-լենինյան թեորիայով զինելու և բուլճերից ախրապետման խնդիրը պահանջում է հարկ յեղած մակարդակի բարձրացնել կուսակցական պրոպագանդայի և ազիտացիայի գործը, Կենտկոմի՝ «Կուսակցական պրոպագանդայի գրվածքի մասին» «ՀամԿ(բ)Կ պատմություն համառոտ դասընթացի» լույսընծայման կապակցությամբ՝ վերջումնը համապատասխան:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը պետք է ունենա պրոպագանդայի և ազիտացիայի հզոր ապարատ հանձին Պրոպագանդայի և ազիտացիայի վարչություն, վրը կենտրոնացնի ամբողջ աշխատանքը տղադիր ու բանավոր պրոպագանդայի ու ազիտացիայի գծով:

10. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի արտադրական-ճյուղային բաժինները պետք է լիկվիդացիայի յենթարկվեն, բացառությամբ Գյուղատնտեսական բաժնի, նկատի ունենալով գյուղատնտեսությունը բնագավառում խորհրդային և կուսակցական կազմակերպությունների գործունեությունը վերահսկելու ու հսկելու խնդրի հատուկ կարևորությունը, և Գյուղացիների բաժնի, վրը պետք է վերահսկման յենթարկի ժողովրդական կրթության գործի գրքովածքը բոլոր հանրապետություններում:

Մարդկամներում, յերկրկոմներում և ազգային կոմկուսակցությունների Կենտկոմներում պետք է տեղծվեն հետևյալ բաժինները՝ Կադրերի, Պրոպագանդայի և ազիտացիայի, Կազմակերպական-հրահանգչական ու Գյուղատնտեսական, և պետք է վերացվեն մնացած բոլոր արտադրական-ճյուղային բաժինները:

Շրջկոմներում և քաղկոմներում անհրաժեշտ է անհնալ հետևյալ բաժինները՝ Կադրերի, Պրոպագանդայի ու ազիտացիայի և Կազմակերպական-հրահանգչական:

Պրոպագանդայի ու ազիտացիայի բաժինների և Կադրերի բաժինների ղեկավարությունը մարդկոմներում, յերկրկոմներում և ազգային կոմկուսակցությունների Կենտկոմներում պետք է գրվի հատուկ քարտուղարների վրա:

11. Սոցիալիստական տնտեսության արագ վերելքի, քանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի քաղաքական ու կուլ-

տուրական արագ աճման պայմաններում խիտա բարձրացել է կուսակցական և պետական կյանքի տեմպը: Պետական և կուսակցական գործերի նկատմամբ ղեկավարություն իրականացնելու, կյանքի կողմից առաջադրվող պահանջներին արագորեն արձագանդելու և հասունացած հարցերը ժամանակին լուծելու համար անհրաժեշտ է կուսակցություն կենտրոնական կազմակերպությունների գոյություն ունեցող սխեման—կուսակցություն համագումար, ՀամԿ(բ)Կ Կենտկոմ—լրացնել նոր որդանով՝ Համամիութենական կուսակցական կոնֆերանսով: Այդ առավել ևս անհրաժեշտ է, վրովհետև կուսակցություն համագումարների միջև ընկած մեծ ժամանակամիջոցը սահմանափակում է կուսակցություն աշխատողները աճած կադրերին, և մանավանդ ՀամԿ(բ)Կ Կենտկոմում, ղեկավար աշխատանքի առաջ քաշելու հնարավորությունը, իսկ կոնֆերանսը կուսակցությունը կկարողանար ալ աղալիսի հնարավորություն: Այդ կապակցությամբ, հասունացել է կուսակցություն կենտրոնական կազմակերպությունների սխեման—կուսակցություն համագումար, ՀամԿ(բ)Կ Կենտկոմ—կուսակցություն Համամիութենական կոնֆերանսով լրացնելու անհրաժեշտությունը, ըստվրում կոնֆերանսը գումարվում է վրջ սակավ, քան տարին մեկ անգամ՝ տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներից, այն հալվով, վր կուսակցություն Համամիութենական կոնֆերանսի գլխավոր խնդիրը համարվի կուսակցություն քաղաքականության հասունացած հարցերի քննարկումը:

Կուսակցության Համամիութենական կոնֆերանսին հարկավոր է իրավունք վերապահել փոփոխելու Կենտկոմի անդամների մի մասին, այսինքն՝ Կենտկոմի կազմից Կենտկոմի այն առանձին անդամներին դուրս հանելու իրավունք, վրոնք չեն ապահովում, վրպես Կենտկոմի անդամների, իրենց վրա գրված պարտականությունների կատարումը, և նրանց փոխարինել ուրիշներով, բայց կուսակցություն համագումարի կողմից ընտրված Կենտկոմի կազմի մեկ հինգերորդից վրջ ավելի քանակությամբ: Կոնֆերանսը Կենտկոմի անդամների կազմը լրացնում է կուսակցություն համագումարի կողմից ընտրված թեկնածուների թվից և վերջիններիս փոխարեն ընտրում է Կենտկոմի անդամության համապատասխան քանակությամբ նոր թեկնածուներ:

Կոնֆերանսի վրոջումները, բացառությամբ Կենտկոմի անդամների փոփոխման և Կենտկոմի անդամության նոր թեկնածուների ընտրության մասին յեղած վրոջման, վրը ՀամԿ(բ)Կ

Կենտկոմի հաստատման կարիք չի զգում, յենթակա յեն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հաստատմանը: Կոնֆերանսի վորոշումները, հաստատված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից, պարտադիր են բոլոր կուսակցական կազմակերպությունների համար: Կոնֆերանսի պատգամավորներն ընտրվում են մարզկոմների, յերկրկոմների և ազգային կոմկուսակցությունների Կենտկոմները պլենումներում: Կենտկոմի անդամները, յեթե նրանք պատգամավորներ չեն հանդիսանում ըստ տեղական կազմակերպությունների լիազորության, կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

12. Անցած ժամանակաշրջանում կուսակցական-քաղաքական և կուսակցական-կազմակերպական աշխատանքի վերելքի հիման վրա ամրապնդվել են սկզբնական կուսակազմակերպությունները, բարելավվել և նրանց կապը մասնաճյուղի հետ, բարձրացել և կոմունիստներին ավանդարդային դերը, բարձրացել և կուսակցական կյանքի մակարդակը: Կուսակցական կազմակերպություններն ավելի յեն մոտեցել տնտեսական և կուլտուրական շինարարության պրակտիկ հարցերին:

Փորձը ցույց տվեց, վոր կուսակցական կազմակերպությունների հաջող աշխատանքն ապահովված էր այնտեղ, վորտեղ սկզբնական կուսակցական կազմակերպությունը կարողացել էր կուսակցական-քաղաքական աշխատանքը դուրսացնել արտադրական պլանների հաջող կատարման, պետական ապարատի աշխատանքի բարելավման, նոր տեխնիկայի յուրացման, աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու համար մղվող պայքարի հետ, ստախանովյան շարժումը ծավալելու հետ, կուսակցական-տնտեսական աշխատանքում նոր կարգերի առաջընթացի հետ: Յեվ ընդհակառակը, այնտեղ, վորտեղ կուսակցական կազմակերպությունները մի կողմ եյին քաշվել տնտեսությունից, իրենց խնդիրները սահմանափակելով ազիտացիայով, կամ այնտեղ, վորտեղ կուսակցական կազմակերպություններն ստանձնել էյին տնտեսության ղեկավարման՝ իրենց վոչ-հատուկ ֆունկցիաներ, փոխարինելով ու դիմադրուկ անելով տնտեսական որդաններին, այնտեղ աշխատանքն անխուսափելիորեն ընկնում էր փակուղու մեջ:

Ներկայումս հասունացել և զանազան տիպի սկզբնական կուսակցական կազմակերպությունների խնդիրներն ավելի ստույգ կերպով վորոշելու անհրաժեշտությունը և մասնավորապես սկզբնական կուսակցական կազմակերպությունների այնպիսի զանազան տիպեր, ինչպես կուսակցական կազմակերպությունն արտա-

դրություն մեջ (Փարբիկա, դործարան, խորհանտեսություն, կուլտեսություն) և ժողկոմատի կուսակցական կազմակերպությունը: Արտադրական տիպի (Փարբիկա-դործարանային, խորհանտեսության, կուլտեսության) կուսակցական կազմակերպությունը պետք է իրավունք վերապահվի վերահսկելու ձեռնարկություն, խորհանտեսության կամ կուլտեսության դործերի վիճակին: Այդ պետք է հասցնի արտադրության մեջ սկզբնական կուսակցական կազմակերպությունները դերի ու պատասխանատվության ուժեղացմանը: Ինչ վերաբերում է ժողկոմատների կուսակցական կազմակերպություններին, ապա դրանք, սպեցիֆիկ պայմանների շնորհիվ չունենալով վերահսկողության ֆունկցիաներ, պետք է ուժեղացնեն իրենց դերը պետական ապարատի աշխատանքի բարելավման դործում: Ժողկոմատային կուսակցական կազմակերպությունները պարտավոր են ահապահել այս կամ այն ժողկոմատի աշխատանքի թերությունները մասին, նշել առանձին աշխատողների թերությունները և դրանց մասին հազորել Կենտկոմին ու ժողկոմատի ղեկավարներին:

Կուսակցության այն բոլոր անդամները, վորոնք աշխատում են այս կամ այն ժողկոմատում, պետք է միավորվեն համաժողկոմատային կուսակցական կազմակերպության կողմից: Ժողկոմատի սկզբնական կազմակերպության քարտուղարը պետք է հաստատվի ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից:

ՀամԿ(բ)Կ XVIII համագումարը վորոշում է ՀամԿ(բ)Կ կանոնադրության մեջ մտցնել հետևյալ հիմնական փոփոխություններն ու լրացումները.

I. ԿՈՒՍՍ.ԿՅՈՒԹՅԱՆ ԱՆԳԱՄՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Վերացնել թեկնածությունից կուսակցության անդամ ընդունելիս դոյություն ունեցող կատեգորիաները և սահմանել թեկնածությունից կուսակցության անդամ ընդունելու միասնական կարգ բանվորների, դյուղացիների ու ինտելիգենցիայի համար: Կուսակցության մեջ բոլոր ընդունվողները պարտավոր են ներկայացնել յերեք տարվա կուսակցական ստաժ ունեցող յերեք կուսանդամի յերաշխավորություններ, վորոնք ճանաչում են նրանց վոչ պակաս քան մեկ տարի համատեղ աշխատանքից: Այլ

կուսակցութիւններէից յեւթաների համար պահպանել ներկայումս գործող կանոնադրական կանոնները: Կուսակցութեան մեջ ընդունելու մասին սկզբնական կուսակցական կազմակերպութեան վորոշումն ուժի մեջ է մտնում չըջկումի կամ քաղկումի կողմից այն հաստատուելուց հետո:

2. Կուսակցութեան անդամների և նրանց պարտականութիւնների վերաբերյալ բաժինը լրացնել կուսակցութեան անդամների իրավունքների մասին կետով, մտցնելով նրա մեջ.

ա) կուսակցութեան անդամների իրավունքը՝ կուսակցական ժողովներում քննադատելու կուսակցութեան ամեն մի աշխատողի.

բ) կուսակցութեան անդամների իրավունքը՝ ընտրելու և ընտրվելու կուսակցական որդաններում.

գ) կուսակցութեան անդամների իրավունքը՝ անձնական մասնակցութիւն պահանջելու այն բոլոր դեպքերում, յերբ վորոշում է կոյացվում նրանց գործունեութեան կամ վարքի մասին.

դ) կուսակցութեան անդամների իրավունքը՝ ամեն մի հարցով ու հայտարարութեամբ դիմելու կուսակցական ամեն մի ինտանցիա, ընդհուպ մինչև ՀամԿ(բ)Կ Կենտկոմ:

3. Վերացնել կուսակցութեան պարբերական մասսայական գումարները, սահմանելով, վոր կուսակցութեանը կարող է սովորական կարգով մաքրել իր շարքերն այնպիսի անձերից, վորոնք խախտում են կուսակցութեան ծրագիրը, կուսակցութեան կանոնադրութեանը, կուսակցութեան կարգապահութեանը:

4. Սահմանել, վոր կուսակցութեանից վտարելու կամ վտարվածներին կուսակցութեան անդամների իրավունքներում վերականգնելու վերաբերյալ հարցերի լուծման ժամանակ պետք է ապահովված լինի առավելագոյն զգուշութիւնն ու ընկերական հոգատարութիւնը և կուսակցութեան անդամին ներկայացված մեղադրանքների հիմնավորվածութեան ուշի-ուշով քննումը, և վոր մանր դանցանքների համար (ժողովին չներկայանալը, անդամավճարները ժամանակին չմուծելը) պետք է կիրառվեն կուսակցական դաստիարակութեան ու ներգործման՝ կանոնադրութեամբ նախատեսված միջոցները, և վոր թե վտարումը կուսակցութեանից, վորը կուսակցական պատժի բարձրագոյն չափն է:

5. Սկզբնական կուսակցական կազմակերպութեան վորոշումը՝ կուսակցութեանից վտարելու մասին, ինչպես նաև վտարվածներին կուսակցութեան անդամների իրավունքներում վերականգնելու մասին՝ ուժ է ստանում միմիայն այն դեպքում, յեթե այն

հաստատվում է կուսակցութեան մարդկումի (յերկրկումի) կողմից:

6. Կուսակցութեանից վտարվածների ապելլացիաները պետք է կուսակցական համապատասխան որդանների կողմից քննութեան առնվեն վոր ուշ, քան յերկշաբաթյա ժամկետում:

7. Վերացնել թեկնածուներին ներկայացվող կանոնադրական պահանջը, վորի համաձայն այն ընկերները, վորոնք անցել են թեկնածուական ստաժը, ընդունում են կուսակցութեան ծրագիրը և յենթարկվում են նրա կանոնադրութեանն ու կարգապահութեանը, այնուամենայնիվ չեն կարող համարվել կուսակցութեան անդամ. մինչև վոր նրանք չյուրացնեն կուսակցութեան ծրագիրը, այսինքն, մինչև վոր նրանք չդառնան մարքսիստորեն կրթված կուսակցականներ:

II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

8. Կուսակցութեան անդամութեան թեկնածուների վերաբերյալ բաժինը համապատասխանեցնել կուսակցութեան անդամների վերաբերյալ բաժնին (ընդունելութեան կատեգորիաների վերացումը):

9. Սահմանել բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի համար ընդհանուր թեկնածուական ստաժ մեկ տարի ժամկետով:

10. Այլ կուսակցութեաններէից յեւթաների համար պահպանել ներկայումս գործող կանոնադրական կանոնները:

III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

11. Կանոնադրութեան մեջ մտցնել հետևյալ լրացուցիչ դրույթները, վորոնք բղխում են կուսակցութեան մեջ հետևողական դեմոկրատական պրակտիկա կիրառելու և դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքները մինչև վերջը իրականացնելու խնդիրներից.

ա) արդելել կուսակցական որդանների ընտրութեանների ժամանակ ցուցակով քվեարկութեանը: Քվեարկութեանը կատարել ըստ առանձին թեկնածութեանների, միաժամանակ կուսակցութեան բոլոր անդամների համար ապահովելով թեկնածուների բացարկման և վերջիններիս քննադատութեան անսահմանափակ իրավունք.

բ) սահմանել կուսակցական որդանների ընտրությունների ժամանակ թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկություն:

12. Հաշվի առնելով կուսակցական ակտիվի քաղաքական հատուկ նշանակութունը կուսակցության կյանքում, կանոնադրությունը լրացնել քաղաքային կազմակերպությունների ակտիվի վերարկերյալ հետևյալ կետով.

Անհրաժեշտ համարել, վորպեսզի առանց բացառության բոլոր հանրապետական, յերկրամասային ու մարզային կենտրոններում, ինչպես նաև բոլոր շատ թե քիչ խոշոր արդյունաբերական կենտրոններում, անպայմանորեն հրավիրվեն քաղաքային կուսակցական կազմակերպությունների ակտիվի ժողովներ՝ կուսակցության և կառավարության կարևորագույն վորոշումների քննարկման համար, վորպեսզի ակտիվի ժողովները գումարվեն վոչ թե պարազի և այդ վորոշումներին ձևականորեն-հանդիսավոր կերպով հավանություն տալու համար, այլ դրանք իսկապես քննարկելու համար, վորպեսզի մեծ կենտրոններում գումարվեն վոչ միայն քաղաքային, այլև ռայոնական կուսակցական ակտիվի ժողովներ:

13. Լիկվիդացիայի յենթարկել ՀամԿ(բ)Կ Կենտկոմում արտադրական-ճյուղային բաժինները, բացառությամբ Գյուղատնտեսական բաժնի և Դպրոցների բաժնի:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմում ունենալ հետևյալ վարչությունները և բաժինները.

- ա) Կադրերի վարչություն,
- բ) Պրոպագանդայի և ագիտացիայի վարչություն,
- գ) Կազմակերպական-հրահանգչական բաժին,
- դ) Գյուղատնտեսական բաժին,
- յե) Դպրոցների բաժին:

Մարզկոմներում, յերկրկոմներում և ազգային կոմկուսակցությունների Կենտկոմներում ստեղծվում են.

- ա) Կադրերի բաժին,
- բ) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին,
- գ) Կազմակերպական-հրահանգչական բաժին,
- դ) Գյուղատնտեսական բաժին:

Քաղկոմներում և շրջկոմներում ստեղծվում են.

- ա) Կադրերի բաժին,
- բ) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին,
- գ) Կազմակերպական-հրահանգչական բաժին:

14. Ի փոփոխումն գոյություն ունեցող կանոնադրության կարգի սահմանել, վոր Կուսակցական վերահսկողության հանձնաժողովն ընտրվում է Կենտկոմի Պլենումի կողմից և գործում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարությամբ:

Կուսակցական վերահսկողության հանձնաժողովը՝

ա) վերահսկողության է յենթարկում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գերեկտիվների կատարումը խորհրդային-տնտեսական որդանների և կուսակցական կազմակերպությունների կողմից.

բ) ստուգում է տեղական կուսակցական կազմակերպությունների աշխատանքը.

գ) պատասխանավորության է յենթարկում ՀամԿ(բ)Կ ծրագիրն ու կանոնադրությունը և կուսակցական կարգապահությունը խախտելու համար հանցավորներին:

15. Պրոպագանդայի ու ագիտացիայի բաժինների և Կադրերի բաժինների ղեկավարությունը մարզկոմներում, յերկրկոմներում և ազգային կոմկուսակցությունների Կենտկոմներում պետք է դրվի հատուկ քարտուղարների վրա:

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16. ՀամԿ(բ)Կ կանոնադրությունը լրացնել Համամիութենական կուսակցական կոնֆերանսի մասին հետևյալ դրույթներով.

ա) Համամիութենական կոնֆերանսը գումարվում է տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներից, կուսակցության քաղաքականության հասունացած հարցերը քննարկելու համար.

բ) Համամիութենական կոնֆերանսը գումարվում է վոչ սակավ, ջան տարին մեկ անգամ:

գ) Համամիութենական կոնֆերանսի պատգամավորներն ընտրվում են մարզկոմների, յերկրկոմների, ազգային կոմկուսակցությունների Կենտկոմների պլենումներում.

դ) Համամիութենական կոնֆերանսի պատգամավորները ընտրության կարգը և ներկայացուցչության նորմաները սահմանվում են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից.

յե) Համամիութենական կոնֆերանսին իրավունք է վերապահվում փոխելու Կենտկոմի անդամների մի մասին, այսինքն՝ իրավունք՝ Կենտկոմի կազմից հանելու Կենտկոմի այն անդամներին, վորոնք չեն ապահովում իրենց՝ վորպես Կենտկոմի

անդամների՝ պարտականությունները կատարումը, և նրանց փոխարինելու ուրիշներով, բայց կուսակցության Համադրումարի կողմից ընտրված Կենտկոմի կազմի մեկ հինգերորդից վոչ ավելի քանակությամբ: Համամիութենական կոնֆերանսը Կենտկոմի անդամների կազմը լրացնում է կուսակցության Համադրումարի կողմից ընտրված թեկնածուների թվից և վերջիններին փոխարեն ընտրում է Կենտկոմի անդամության Համապատասխան թվով նոր թեկնածուներ:

զ) Համամիութենական կոնֆերանսի վորոշումները, բացառությամբ Կենտկոմի անդամների փոփոխման և Կենտկոմի անդամության նոր թեկնածուների ընտրության մասին յեղած վորոշման, վորը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Հաստատման կարիք չի զգում, յենթակա յեն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Հաստատմանը: Համամիութենական կոնֆերանսի վորոշումները, Հաստատված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից, պարտադիր են կուսակցական բոլոր կազմակերպությունների համար:

ե) Կենտկոմի անդամները, յեթե նրանք պատգամավորներ չեն ըստ տեղական կազմակերպությունների լիազորության, Համամիութենական կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

Վ. ՄԱՐԶԿՈՄՆԵՐԻ, ՔԱՂԿՈՄՆԵՐԻ, ՇՐՋԿՈՄՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՈՒ ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՍՏԱԺԻ ՄԱՍԻՆ

17. Կուսակցական աշխատողների նոր կադրեր կուսակցական ղեկավար աշխատանքի առաջ քաշելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով, ի փոփոխումն կանոնադրության համապատասխան պարագրաֆի, կուսակցական ստաժ սահմանել՝ մարզկոմների, յերկրկոմների, ազգային կոմկուսակցությունների Կենտկոմների քարտուղարների համար 12 տարվա փոխարեն առնվազն 5 տարի, քաղկոմների քարտուղարների համար 10 տարվա փոխարեն առնվազն 3 տարի, շրջկոմների քարտուղարների համար 7 տարվա փոխարեն առնվազն 3 տարի և սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարների ու ցեխային կուսկազմակերպիչների համար առաջին զեկդում առնվազն 3 տարվա, իսկ յերկրորդ զեկդ-

ըստ առնվազն 2 տարվա ստաժի փոխարեն սահմանել առնվազն մեկ տարվա կուսակցական ստաժ:

Ոկրուզների, նավատորմների և բանակների Քաղվարչությունների պետերի համար պարտադիր համարել 10 տարվա փոխարեն 5 տարվա կուսակցական ստաժը և դիվիզիաների ու բրիգադների քաղբաժինների պետերի համար՝ 6 տարվա փոխարեն 3 տարվա կուսակցական ստաժը:

ՎԻ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ, ՄԱՐԶԱՅԻՆ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

18. Սահմանել, վոր մարզկոմներում, յերկրկոմներում և ազգային կոմկուսակցությունների Կենտկոմներում պետք է լինեն 4-5 քարտուղարներ, այդ թվում՝ առաջին քարտուղար, յերկրորդ քարտուղար, քարտուղար կադրերի գծով և քարտուղար պրոպագանդայի գծով:

ՎԷ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԿՐՈՒԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

19. Ոկրուզային կուսակցական կազմակերպություններին առկա կանոնադրական իրավունքներ, ՀամԿ(բ)Կ կանոնադրությունը լրացնելով համապատասխան դրույթով:

ՎՊԻ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

20. Ռազմա-ծովային Նավատորմի Ժողկոմատ ստեղծվելու կառակցությամբ, Կարմիր Բանակի կուսակցական կազմակերպությունների մասին կանոնադրական դրույթը տարածել նաև Ռազմա-Մովային Նավատորմի կուսկազմակերպությունների վրա, սահմանելով, վոր Ռազմա-Մովային Նավատորմի Քաղաքական Վարչությունը աշխատում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Ռազմա-Մովային Բաժնի իրավունքներով:

**IX. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

21. Արտադրական ձեռնարկությունների, այդ թվում խորհրդանշանաբանությունների և կոլտնտեսությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունների դերը և ձեռնարկությունների աշխատանքի վիճակի համար նրանց պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով, այդ կազմակերպություններին տալ ձեռնարկության աղմինիստրացիայի աշխատանքի վերահսկողության իրավունք:

Ժողկոմատային կուսակցական կազմակերպությունները, վորոնք, խորհրդային հիմնարկների աշխատանքի հատուկ պայմանների շնորհիվ, վերահսկողության Ֆունկցիաներից ուղտվել չեն կարող, պարտավոր են ահազանդել հիմնարկի աշխատանքի մեջ յեղած թերությունների մասին, նշել ժողկոմատի ու նրա առանձին աշխատողների աշխատանքի թերությունները և իրենց նյութերն ու նկատառումներն ուղարկել ՀամԿ(բ)Կ Կենտկոմ և ժողկոմատի ղեկավարներին:

Ժողկոմատային կուսակցական կազմակերպությունները քարտուղարները հաստատվում են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից:

Ժողկոմատի կենտրոնական ապարատի բոլոր կոմունիստ աշխատողները մտնում են մեկ համաժողկոմատային կուսակցական կազմակերպության մեջ:

22. Ի փոփոխումն դոյություն ունեցող դրույթի, սկզբնական կուսակցական կազմակերպությունների ընտրովի որդաններն այսուհետև անվանել վոչ թե կոմիտեներ, այլ բյուրոներ (այս-ինչ կուսակցական կազմակերպության բյուրո):

23. Սկզբնական կուսակազմակերպությունները բյուրոներն ստեղծվում են կուսակցության առնվազն 15 անդամ ունեցող կուսակազմակերպություններում:

24. Կուսակցության անդամների արագ աճեցման և նրանց կոլեկտիվ ղեկավարության վոգով զաստիարակելու նպատակով, կուսակցության առնվազն 15, բայց 100-ից վոչ ավելի անդամ ունեցող ցեխային կուսակցական կազմակերպություններին իրավունք տալ ընտրելու ցեխային կուսակցական կազմակերպության բյուրո՝ կազմված 3-ից մինչև 5 մարդուց, իսկ կուսակցության 100-ից ավելի անդամ ունեցող ցեխային կուսակազմակերպություններին՝ 5-ից մինչև 7 մարդուց:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԶՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ
ՊԼԱՆԸ (1938—1942 թ.թ.)
ՀԱՄԿ(Բ)Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԸՆԿ. Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ
ԹԵԶԻՍՆԵՐԸ

I. Յերկրորդ հնգամյակի հանրազումարները և յերրորդ հնգամյակի պլանի հիմնական խնդիրները	5
II. Արտադրության աճման պլանն ըստ յերրորդ հնգամյակի	14
III. Նոր շինարարության պլանը և նրա տեղադրումն ըստ յերրորդ հնգամյակի	26
IV. Աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման պլանն ըստ յերրորդ հնգամյակի	35

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՀԱՄԿ(Բ)Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԸՆԿ. Ա. Ա. ԺԴԱՆՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ
ԹԵԶԻՍՆԵՐԸ

I. Կուսակցության անդամները և նրանց իրավունքները ու պարտականությունները մասին	55
II. Կուսակցության անդամության թեկնածուների մասին	57
III. Կուսակցության կազմակերպական կառուցվածքի մասին	57
IV. Կուսակցության կենտրոնական կազմակերպությունների մասին	59
V. Մարզկոմների, քաղկոմների, շրջկոմների քարտուղարները և Կարմիր բանակի ու Ռազմա-Մովային նավատորմի քաղբաժինների պետերի կուսակցական ստաժի մասին	60
VI. Կուսակցության յերկրամասային, մարզային, հանրապետական կազմակերպությունների մասին	61
VII. Կուսակցության ոկրուգային կազմակերպությունների մասին	61
VIII. Կարմիր բանակի և սազմա-ծովային նավատորմի կուսակազմակերպությունների մասին	61
IX. Սկզբնական կուսակցական կազմակերպությունները մասին	62



30

Խմբագիր Դ. Հարությունյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեշյան
Կոնսրուկտոր սրբագրիչ Լ. Արսվյան

Գլավիճտի լիազոր № 4—2453, հրատ № 647,
Պատվեր № 26, տիրաժ 20.000,
Թղթի չափսը 60×92¹/₁₆ (38,400 տպ. նիշ. 1 տպ. մամուլում), 4 տպ. մամուլ
Հանձնվել է արտադրության 2/II 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 3/II 1939 թ.
Գինը 30 Կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,
Ցեքեան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0928243

4 ФЕВ. 195

7-120 30 4.

54

11

28827

В. М. МОЛОТОВ
ТРЕТИЙ ПЯТИЛЕТНИЙ ПЛАН РАЗВИТИЯ
НАРОДНОГО ХОЗЯЙСТВА СССР
1938 — 1942 ГГ.
ТЕЗИСЫ

А. А. ЖДАНОВ
ИЗМЕНЕНИЯ В УСТАВЕ ВКП(б)
ТЕЗИСЫ

Арминз-Издательство полит. литературы
Ереван, 1939